



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



13

ՊԱՇՏՆԱԿԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԼԽԱԻՈՐ ՇՏԱԲԻ

# ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ

## ԿԱՆՈՆՍԱԳԻՐԿ

Ե Ր Ե Ի Ա Ն

Էլեկտրօ-տպարան «Ուրարդիա»

1920 թ.



1192  
103



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՄԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԼԽԱՒՈՐ ՇՏԱԲԻ

# ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ

## ԿԱՆՈՆԱԳԻՐԻ

( Հայ-Ռուս բարասրբանոց )

1006  
1947  
9001



Ե Ր Ե Ի Ա Ն

«Հայ-Ռուս-տարածական Գրադարան»





103 - Ch 9-7

# Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Սոյն կանոնադրերը մասամբ թարգմանուած է սուսական նոյնաձև կանոնադրից, մասամբ Հայ Սղգ. Սորճրդի 1918 թ.ի հրատարակուած «Дисциплинарный уставъ Армянскаго войска» կանոնադրից, որը իւր կողմից փոփոխութիւններով մի ոչ ամբողջական թարգմանութիւն է սուսական նոյն կանոնադրի: Թարգմանութիւնից առաջ, Ռազմական Նախարարի հրամանով, գլխաւոր Շտաբում կազմուած մի յանձնաժողով, գործարար Բողոքականի նախագահութեամբ յիշեալ երկու կանոնադրից, փոփոխութիւններով և կըրճատումներով կազմել է սոյն կանոնադրի սուսերէնը: Թարգմանութիւնը կատարել է փոխ տեղակալ Գրիգոր Տէր-Յովսէփեանը, վերջին գլուխը սլաւոնացաւորանք՝ Երևանի համալսարանի դոցենտ զ-ր Մ. Սրեգեանը: Ամբողջ թարգմանութիւնը կարդացել է բնագրի հետ բազմաւելով, ուղղել է յանձնախմբի մէջ նախագահութեամբ գնդապետ Պետր. Աթաշեանի և մասնակցութեամբ բացի յիշեալ անձերից, փոխ գլխապետ Դաւուտ Մելիք Բարութիւնեանի, տեղակալ Եղիշէ Այվազեանի և փոխտար Մանասէր Մանասէրեանի:

# Յ Ա Ն Կ

- Գլուխ I Ընդհանուր դրույթիւններ, յօդ. 1-7
- » II Կարգապահական գանցանքներ և պատիժներ, յօդ. 8-12
- » III Չնւորներին տրւելիք կարգապահական պատիժները յօդ. 13-18
- » IV Պետերի իշխանութեան աստիճանը կարգապահական պատիժների ենթարկելու վերաբերմամբ յօդ. 19-27
- » V Սպաներին և զօրական աստիճանաւորներին տրւած կարգապահական պատիժները, յօդ. 28-30
- » VI Պետերի իշխանութեան աստիճանը սպաներին և զօրական աստիճանաւորներին կարգապահական պատիժների ենթարկելու վերաբերմամբ, յօդ. 31-39
- » VII Չօրական պետերի իշխանութեան աստիճանը կարգապահական պատիժներ տալու վերաբերմամբ յատուկ դէպքերում, յօդ. 40-43
- » VIII Կարգապահական պատիժներ տալու կալվքը, յօդ. 44-62
- » IX Կարգապահական պատիժներն ի կատար տնելու կարգը յօդ. 63-74
- » X Պատժւածների դասը, յօդ. 75-80
- » XI Պատիժների մտեան, յօդ. 81-89
- » XII Գանգատներ, յօդ. 90-103
- » XIII Վարչական կարգով սրբելի դրամական տուժերի մասին, յօդ. 104-106
- » XIV Գանձի դատարան, յօդ. 107-153

ԿԱՌԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ



Ի ԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

Ընդհանուր դրույթիւններ:

1. Ձինւորական կարգապահութիւնը զինւորական ծառայութեան հիմքն է:

Ձինւորական կարգապահութիւնը զինւորական օրէնքներով առաջադրւած կանոնները խստիւ և ճշտիւ պահելն է: Ուստի դա պարտաւորեցնում է առանց առարկոյ թեան, ճշտիւ կատարել իշխանութեան պատէրները, խստիւ պահպանել սատիճանայարգութիւնը, իբրև յանձնւած խմբում կարգ պահել, բարեխղճութեամբ կատարել ծառայութեան պարտականութիւնները, և անպատիժ չթողնել ստորադրեաների յանցանքներն ու դանցառութիւնները:

2. Երբ ստորադրեալն առանց առարկոյ թեան կատարում է պետի պատէրները, այն ժամ անակ պետն է միայն պատասխանափու իր պատէրի հետևանքների համար: Ակներև յան.

ցական հրամանները ենթակայ չեն կատարման։  
Այդպիսի հրամաններ կատարողները պատաս-  
խանատու են իրենց արարքի համար։

Ծանօթութիւն. Ստացած պատուէրը կատարող զին-  
ւորականը, եթէ մի նոր պատուէր է ստանում, որ նրան  
խանգարում է նտխորդ պատուէրի կատարումն աւար-  
տել, նա պարտաւոր է այդ մասին զեկուցել երկ-  
րորդ պատուէրը տւող անձին և ապա գործել այնպէս,  
ինչպէս նորից կհրամայել։ Այդ դէպքում, նա պա-  
տասխանատու չէ հետևանքների համար. և ամբողջ  
պատասխանատու թիւնն ընկնում է այն անձի վրայ,  
որը երկրորդ անգամ պատուէր է տւել առաջին չկա-  
տարւած պատուէրի մասին իրեն զեկուցելուց յետոյ։

3. Աստիճանայարգութիւնը պարտաւորեց-  
նում է կրտսերին, թէ ծառայութեան ժամա-  
նակ և թէ ծառայութիւնից դուրս, հարկաւոր  
յարգանք ցոյց տալ ոչ միայն պետին, այլ և  
աստիճանով աւագին։

4. Ծառայութեան օգուտը պետից պահան-  
ջում է զինւորական կարգապահութիւնը և կա-  
նոնները պահել խմբի մէջ։ Իրա հետ միասին՝  
ծառայութեան օգուտը պարտաւորեցնում է  
նրան արդարամիտ լինել իր ստորագրեալների  
հետ ունեցած յարաբերութիւնների մէջ, հայ-

րաքար հոգ տանել իրեն յանձնւած խմբի բարե-  
 լաւ վիճակի մասին, վերահասու լինել իր ստո-  
 րագրեալների կարիքներին, հարկաւոր գէպքում  
 լինել նրանց խորհրդ ստուն ու առաջնորդը, խու-  
 սափել ամեն անտեղի խստութիւնից, որ ծա-  
 սայութեան պահանջներից չի առաջ գալիս,  
 նոյնպէս և իւրաքանչիւր սպայի և զինւորի  
 մէջ զարգացնել և պահպանել զիտակցութիւն  
 զինւորի վսեմ նշանակութեան մասին որ կոչ-  
 ւած է հայրենիքը արտաքին և ներքին թշնա-  
 միներից պաշտպանելու:

5. Հասարակական անդորրութեան խախտման,  
 ակներև անհնազանդութեան և խռովութեան  
 գէպքերում, պետք պարտական է իրենց պաշտ-  
 քը շխտարողներին հնազանդեցնել ոյժով կամ  
 զէնքով և իրենից կախւած բոլոր միջոցները  
 ձեռք տանել անկարգութիւնները դադարեցնելու  
 համար: Ամեն մի զինւորական, առանց կոչման  
 և աստիճանի խտրութեան, պարտաւոր է պի-  
 տին աջակցել անհնազանդներին զսպելու համար:

6. Պետք հետևանքների համար պատասխանա-  
 տըութեան ենթակայ չէ, երբ նա ստիպւած է

լինում ոյժ կամ զէնք գործադրել կարգ ու կանոնը վերականգնելու, կամ պարտքը կատարելիս իրեն ընդհանրողին ճնշելու համար:

Այդպիսի արտակարգ դէպքերի մասին պետք պարտաւոր է անյապաղ յայտնել վերադասութեան կարգով արած կարգադրութեան կանոնաւորութիւնը ստուգելու և, եթէ հարկաւոր լինի, հետագայ միջոցները ձեռք առնելու համար:

7. Այս կանոնագիրքը կիրառուում է ընդհանրապէս զօրքի բոլոր տեսակների շարային մասերում. նկատի ունենալով, որ վաշտապետներին համապատասխան են հեծելավաշտերի պետերը և հրետազօրի մարտկոցների ու հրետազօրի կրանքների աւագ սպաները, իսկ զուամարտապետներին՝ հրետազօրի բաժնեակի կազմի մէջ մտնող մարտկոցների պետերը:

Գործավարութեան ժամանակ կարգապահական պատիժներ դնելու վերաբերմամբ՝ հեծելավաշտերը, մարտկոցները, հրետազօրի կրանքները, առանձին խմբերը և զօրական իշխանութեան վարչութիւնները հաւասար են վաշտին, բայց վարչութիւնների մէջ, բացի այդ, պահ-

ուում են սպաների և գորական աստիճանաւոր-  
ների այբբենական մատեանները:

## ԳՆՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

Կարգապահական յանցանքներ և պատիժներ.

8. Կարգապահական պատիժը այն պատիժն է, որ պետն իր իշխանութեամբ, առանց դատարանի է տալիս:

9. Կարգապահական պատիժներին ենթակայ են, ընդհանրապէս, թէ ծառայութեան վերաբերեալ և թէ հասարական կարգի և բարեվայելչութեան խախտման վերաբերեալ թեթև յանցանքները, որոնք դատարանին ենթակայ չեն:

10. Երբ ընդհանուր կամ գինւորական քրեական օրէնքներով յանցանքի համար յանցանքի աստիճանի համեմատ զանազան պատիժներ են որոշւած, որոնցից մի քանիսը պատկանում են կարգապահական պատիժներին, իսկ միւսները այն պատիժներին, որոնք տրւում են միայն գինւորական դատարանի դատավճռով, այդ ժամանակ իշխանութեան հայեցողութեանն է

Թողնուամ կամ կարգապահական պատժներից մէկը տալ, կամ յանցաւորներին դատի մատնել: Այս հարցի լուծումը և կարգապահական պատժի չափի որոշումը պատկանում է այն պետին, որից օրէնքով կախած է յանցաւորին դատի մատնելը:

11. Եթէ յանցանք գործողները շատերն են և գլխաւոր յանցագործները մատնւած են գինւորական դատարանի, այն ժամանակ նրանց մասնակիցները նոյնպէս կարող են պատժուել միմիայն դատարանի դատավճռով:

12. Ով որ մի այնպիսի հակօրէն արարքի համար, որ գինւորական դատարանի դատավճռով է պատժի ենթակայ, այդպիսի պատժի փոխանակ ենթարկուել է կարգապահական պատժի, նա գինւորական դատարանի դատին մատնուելուց չի ազատուի:

### ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

Քինուներին տրուելիք կարգապահական պատժները.

13. Սոսկական գինւորներին, և թելանիններին տրո-

ւ. ու մ են հետևեալ կարգապահական պատիժները՝

ա. Արգելել զօրանոցից կամ բակից հեռանալ ոչ աւելի, քան մի ամիս:

բ. Հերթից դուրս նշանակել ծառայութեան վերակարգի մէջ ոչ աւելի, քան ութ անգամ:

գ. Հասարակ կալանք ոչ աւելի, քան մի ամիս:

դ. Սիսա կալանք ոչ աւելի, քան քսան օր:

ե. Ջրկել թելանու կոշուկից և կոշուկի կարգն ու կոպարն իջեցնել:

Ծանօթութիւն 1. ա. և բ, կէտիրում յիշեած պատիժները կարելի է միացնել և ուրիշ կարգապահական պատիժների հետ:

Ծանօթութիւն 2. Պատժւածների դասին պատկանող զինւորներին կարելի է արգելել հեռանալու զօրանոցից կամ բակից ոչ աւելի, քան երկու ամիս ժամանակով. զինւորի՛ պատժւածների դասում կարգելը սակայն, պիտի լինի դատարանի դատավճռով իբրև հետևանք զօրական բանտում մենաւոր բանտարկութեանը ու կարգապահական զօրամասերի մէջ դրելուն, ահկախ զինւորական պատժական կանոնագրքի 50, 50. 51 և 52 յօդւածների մէջ ցոյց տրւած իրաւազոչո մսերի: Պատժւածների դասում կարգելու պատժին ենթակայ են բոլոր

զինւորները, թէ կացութեան առանձին իրաւունք-  
ներ ունեցողները և թէ չունեցողները:

14. Ենթասպաներին (բացի գերակետիկներէց)  
տրւում են հետևեալ կարգապահական պատիժ-  
ները՝

ա. Յանդիմանութիւն:

բ. Արգելել զօրանոցից կամ բակից հեռանալ  
ոչ աւելի, քան մի ամիս:

գ. Հերթից դուրս նշանակել ծառայութեան  
վերակարգի մէջ ոչ աւելի, քան ութ անգամ:

դ. Հասարակ կալանք ոչ աւելի, քան մի ամիս:

ե. Պաշտօնը ցածրացնել:

զ. Խիստ կալանք ոչ աւելի, քան քսան օր:

է. Չարժանացնել սպորտութեան:

ը. Չրկել ենթասպայական կոչումից:

Ծանօթութիւն. բ. գ. և ը. կէտերում յիշւած պա-  
տիժները կարելի է միացնել և ո. ընդ կարգապահա-  
կան պատիժների հետ:

15. Վերականները խիստ կալանքի չեն ենթ-  
թարկւում:

16. Առաջին կարգի շարային գերակետիկ  
զինւորներին (փոխ. սպաներին) և երկրորդ  
կարգի զինւորներին (ենթասպաներին ու թե-

(անիսերին) տրւում են հետևեալ կարգապահա-  
կան պատիժները՝

ա. Նկատողութիւն և յանդիմանութիւն:

բ. Կալանք պահանոցում մինչև մի ամիս:

գ. Չարժանացնել բարձր կոչման և սպայու-  
թեան:

դ. Արձակել ծառայութիւնից:

17. Միւս գերակետիկ զինւորներին, որոնք  
պատկանում են գերակետիկ ծառայողների  
2 և 3 կարգին, տրւում են հետևեալ պատիժ-  
ները՝

ա. Նկատողութիւն և յանդիմանութիւն:

բ. Արգելել զօրանոցից կամ բակից հեռանալ  
մինչև մի ամիս:

գ. Հերթից դուրս նշանակել ծառայութեան  
գերակարգի մէջ ոչ աւելի, քան ութ անգամ:

դ. Հասարակ կալանք մինչև մի ամիս:

ե. Չարժանացնել սպայութեան:

զ. Արձակել ի պահեստ կամ ի հրատար նաև  
այն մի տարին անցնելուց առաջ, որի ընթաց-  
քում ծառայել է թոյլ տրւած նրանց:

18. Զօրքերի երթի և այնպիսի տեղաւոր-

ման ժամանակ, երբ անհնարին է յանցաւոր-  
 ներին կալանքի ենթարկել, սոսկական զինւոր-  
 ներն ու թելահարները, թեթև կալանքի փոխա-  
 րէն, առանց հերթի նշանակում են խմբի  
 աշխատանքներն անելու, իսկ խիստ կալանքի  
 փոխարէն, ռազմերթի ամբողջական հանդեր-  
 ձանքով, կալանքի իւրաքանչիւր մի օրւայ տեղ  
 կանգնեցում են երկու ժամ հրացանն  
 ուսին:

Այս կանոնը երբ կիրառում են և հեծելագործի  
 մէջ, բացի այն դէպքերից, երբ զօրամասը  
 գտնւում է շարժման մէջ, այդ ժամանակ, զին-  
 ւորը կալանքի փոխարէն, պէտք է գնայ ոտքով  
 լրիւ ռազմական հանդերձանքով, գանձապետի  
 արկղի ետևից:

### ԳԼՈՒԽ ԶՈՐՐԱՐԴ.

Պետերի իշխանութեան աստիճանը կարգապա-  
 հական պատիժների ենթարկելու վերաբերմամբ.

19. Ստորին աստիճանների պետերը, սկսած  
 շոկապետից մինչև կրտսեր սպաները բաց-

առեալ, իրաւունք ունին յանդիմանութիւն և  
նկատողութիւն անելու:

20. Կրտսեր սպաներն իրենց ստորադրեալ  
զինւորների նկատմամբ իրաւունք ունին՝

ա. Արգելել զօրանոցից կամ բակից հեռա-  
նալ մինչև ութ օր:

բ. Հերթից դուրս նշանակել ծառայութեան  
վերակարգի մէջ, մինչև չորս անգամ:

գ. Հասարակ կալանքի ենթարկել մինչև  
երկու օր:

21. Վաշտապետներն իրաւունք ունին՝

ա. Արգելել զօրանոցից կամ բակից հեռանալ  
մինչև մի ամիս:

բ. Հերթից դուրս նշանակել վերակարգի մէջ  
մինչև ութ անգամ:

գ. Հասարակ կալանքի ենթարկել մինչև հինգ  
օր, խիստ կալանքի մինչև հինգ օր:

22. Վաշտապետների իշխանութիւն ունին այն  
բոլոր սպաները և զօրական աստիճանաւորները,  
սրտնք կասալարում են որևէ առանձին մաս  
և զինւորներ ունին իրենց ենթակայ:

23. Գազի հրամանատարի օգնականները իրենց

ստորագրեալ զինւորներին նկատմամբ գումարաւա  
պետի (ոչ առանձին գումարաւակի) իշխանութիւն  
ունին:

24. Գումարաւետները (ոչ առանձին գու-  
մարաւակի) իրաւունք ունին հասարակ կալան, ի  
ենթարկելու մինչև տասն օր, խիստ կալանքի՝  
մինչև տասն օր:

25. Այս կանոնագրի 15-րդ յօդուածում  
թւած կարգապահական պատիժները նոյն յօդ-  
ուածում չիշուած շարային գերակետիկ զին-  
ւորներին տալու վերաբերմամբ իրաւունք ու-  
նին՝ կրտսեր սպաները — նկատողութիւն և յան-  
դիմանութիւն անելու գերակետիկ ծառայողնե-  
րին, վաշտաւետները և գումարաւետները գե-  
րակետիկ ծառայողներին՝ կալանքի ենթարկելու  
պահանջում այնքան ժամանակով ինչքան ժա-  
մանակ, որ նրանք իրաւունք ունին հասարակ  
կալանքով պատժելու միւս զինւորներին (յօդ.  
19 և 20):

26. Գնդի հրամանատարները իրաւունք  
ունին՝

ա. հասարակ կալանքի ենթարկել մինչև մի

ամիս, խիստ կալանքի մինչև քսան օր:

բ. Պատիժը խստացնելու համար ենթարկել հասարակ և խիստ կալանքի միասին՝ մի ամիս:

գ. Պաշտօնը, կոչումի կարգը և ոտճկի կոպարը ցածրացնել:

դ. Ջրկել թելանու կոչումից:

ե. Չարժանացնել սպայութեան:

Այս կանոնագրքի 15-րդ յօդաձումն թեև կարգապահական պատիժները նոյն յօդաձումն յիշած շարային գերակատիկ զինւորներին ապու վերաբերմամբ՝ գնդի հրամանատարները իրաւունք ունեն գերակատիկ ծառայողներին կալանքի ենթարկել ու պահանջում այնքան ժամանակով, որքան ժամանակով նրանք իրաւունք ունեն հասարակ կալանքով պատժելու միւս զինւորներին: Գնդի հրամանատարին նոյնպէս իրաւունք է տրւում գերակատիկ զինւորներին շարժանացնել (յօդ. 15) սպայական աստիճանի և ծառայութիւնից նրանց ալ ձակել կարգապահական եղանակով:

Ծանօթութիւն: Գնդերի հրամանատարները, բացի այդ, իրաւունք ունեն պատժաւժների դասում եղող զինւորներին արգելել զօրանոցից և բակից հեռա-

նալ մինչև երկու ամիս ժամանակով:

27. Երբ մի առ սնձին մաս կամ խումբ յատուկ գործուղման մէջ է, նրա պետի իրաւունքները մեծանում են, գումարտապետինը՝ մինչև գնդի հրամանատարի իրաւունքները, վաշտապետինը՝ մինչև գումարտապետի իրաւունքները, և վաշտի կրտսեր սպայինը՝ մինչև վաշտապետի իրաւունքները:

Ենթասպաները, նմանապէս և նրանց փոխանորդող միւս զինւորները, երբ աւագի փոխանակ գտնւում են յատուկ գործուղման մէջ սպայի ըսցակայութեան ժամանակ, ունեն կրտսեր սպայի իրաւունքներ:

Զօրամասի օրապան սպան, իսկ ուր այդպիսին չկայ, այն ժամանակ օրապան ենթասպան, անյետաձգելի դէպքերում և կարգը վերականգնելու համար իրաւունք ունի յանցաւորին նախնական կաշանքի ենթարկել մինչև կաշանաւորումի վերաբերմամբ ուղղակի պետի կարգադրութիւն անելը:

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Սպանելիև եւ գորակաւ աստիճանաւորներին  
տրուած կարգապահական պատիժները:

28. Սպանելիև եւ գորական աստիճանաւորներին  
տրուած են հետևեալ կարգապահական պատիժները՝

ա. Նկատողութիւն եւ յանդիմանութիւն, որ  
տրուած են բանաւոր եւ գրաւոր կերպով:

բ. Նկատողութիւն եւ յանդիմանութիւն, որ  
յայտարարուած են սպանելի ժողովի առաջ:

գ. Նկատողութիւն եւ յանդիմանութիւն, որ  
յայտարարուած են հրամանի մէջ:

դ. Կալանք, ամուր եւ պահանջում մինչև մի  
ամիս ժամանակով:

ե. Սպանելիև եւ գորական աստիճանաւորներին  
չորժամացնել աստիճանի բարձրացման,  
երբ թափուր պաշտօն կայ, կամ որոշ թւով  
տարիների ծառայութեան համար, մինչև պետի  
հաւանութեան վայելութիւն տալը:

զ. Պաշտօնից կամ մասի հրամանատարութիւնից  
հեռացնել:

Ծանօթութիւն: Յանցաւորութիւնը կամ զանցառութիւնը դիտել տալը բանաւոր կերպով, կամ թէ առաջագրութեամբ կամ հրամանի մէջ, կարգապահական պատիժ չէ, այլ դրանով պետք միայն յիշեցնում է իրեն ստորադրեալին նրա պարտականութիւնները:

29. Սպաներն ու զինւորական աստիճանաւորները այն դէպքում, երբ կարգապահական պատիժները յաջողութիւն չեն գտնուի, եթէ նրանք այնպիսի արարքների մէջ են տմբաստանւում, որոնցով վիրաւորւում է զինւորականի և քաղաքացու պատիւը, կարող են ծառայութիւնից աչձակել կարգապահական եղանակով:

30. Զօրավարները, գնդի հրամանատարները, նոյնպէս և միւս պետերը, որոնք գնդի հրամանատարի իշխանութիւն ունեն, կարող են, բացի արտակարգ դէպքերից (յ.դ. 5), կարգապահական եղանակով կալաքի ենթարկել միմիայն հաւաքագրութեան որոշումը:

### ԳՆՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ.

Պետերի իշխանութեան ստորոնակներ, սպաների և զօրակցան ստորոնակներին կարգապահական պատիժների ենթարկելու վերաբերմամբ:

31. Վաշտապ'տներն իրաւունք ունեն

ա. Նկատողութիւն և յանդիմանութիւն անել.

բ. Տանու կալանքի ենթարկել մի օրով:

32. Գնդի հրամանատարի օգնականները իրենց ենթակայ սպաների և զօրական աստիճանաւորների նկատմամբ ունեն ոչ առանձին գումարտակի պէտի իշխանութիւն:

33. Գումարտապետները (ոչ առանձին գումարտակի) իրաւունք ունեն՝

ա. Նկատողութիւն և յանդիմանութիւն անել սպաների ժողովի առաջ.

բ. Ստորակայ սպաներին կալանքի ենթարկել տանը և պահանջուած երեք օրով:

34. Գումարտապետը, երբ գտնուում է յատուկ գործուղման մէջ խմբի կամ առանձին մասի հետ իբրև նրա պետ, ունի գնդի հրամանատարի իրաւունքներ, իսկ վաշտապետները և կրտսեր սպաները նման դէպքում ունեն՝ տուրքիները՝ գումարտապետի իրաւունքներ, իսկ վերջինները՝ վաշտապետի իրաւունքներ:

35. Գնդի հրամանատարները իրաւունք ունեն՝

ա. Նկատողութիւն և յանդիմանութիւն անել հրամանի մէջ.



26761

բ. կալանքի ենթարկել տանը և պահանջում բարձրակայ սպաներին՝ երեք օրով, ստորակայ սպաներին և զօրական աստիճանաւորներին՝ եօթն օրով:

գ. Հեռացնել վաշտի կամ գումարտակի հրամանատարութիւնից նման: ապէս և մեկուսել մի որևէ առանձին մասի կառավարութիւնից: Բացի դրանից՝ զնդի հրամանատարները իրաւունք ունեն վերագասութեան կարգով առաջադրութիւն անել սպաներին և զօրական աստիճանաւորներին շարժանացնելու աստիճանի բարձրացման, երբ թափուր պաշտօն կայ, կամ որոշ թւով տարիների ծառայութեան համար:

36. Բրիգադի հրամանատարն իրաւունք ունի՝ ա. Գնդերի հրամանատարներին և նրանց հաւասար իրաւունքներ ունեցող պետերին, նոյնպէս և համապատասխան դասերի զօրական աստիճանաւորներին, նկատողութիւններ և յանդիմանութիւններ յայտարարել բանաւոր կերպով, կամ թէ առաջադրութեամբ, կամ հրամանների մէջ:

բ. Բարձրակայ ու ստորակայ սպաներին և

համապատասխան դասերի գորական աստիճանաւորներին, բացառեալ այս կանոնագրքի 30-րդ յօդուածի մէջ ցոյց տւած անձերը, կալանքի ենթարկել տանը և պահանջում, բարձրակայ սպանելին՝ մինչև եօթն, իսկ ստորակայ սպանելին՝ մինչև տասնուչորս օր:

զ. Պատերազմի ժամանակ, իսկ անյետաձգելի դէպքերում նաև խաղաղութեան ժամանակ, հեռացնել զնդի հրամանատարներին և նրանց հաւասար իրաւունքներ ունեցող անձերին, այդ մասին անյայտող տեղեկագրելով վերադասութեան կարգով.

դ. Չարժանացնել սպանելին և գորական աստիճանաւորներին աստիճանի բարձրացման, երբ թափուր պաշտօն կայ, կամ որոշ թւով տարիների ծառայութեան համար:

ե. Չրկել ենթասպաններին իրենց կոչումից:  
37. Սպարապետն իրաւունք ունի՝

ա. Բրիգադների հրամանատարներին և նրանց հաւասար իրաւունքներ ունեցող անձերին նկատողութիւններ և յանդիմանութիւններ յայտարարել բանաւոր կերպով, կամ թէ առաջագրութեամբ կամ հրամանների մէջ:

բ. Բարձրակայ ու ստորակայ սպաներին, նոյն-  
պէս և համապատասխան դասերի զօրական աս-  
տիճանաւորներին, բացառեալ այս կանոնա-  
գրքի 30-րդ յօդւածի մէջ ցոյց տրւած անձերը,  
կալանքի ենթարկել տանը և պահանոցում մին-  
չև մի ամիս:

գ. Պատերազմի ժամանակ, իսկ անյետաձգե-  
լի դէպքերում նաև խաղաղութեան ժամանակ,  
հեռացնել հրամանատարութիւնից զօրավարնե-  
րին, այդ մասին սնյապաղ տեղեկագրելով ըստ  
վերադասութեան՝ օրէնքի մէջ սահմանուած  
կարգով:

դ. Պաշտօնից հեռացնել զօրական աստիճա-  
նաւորներին, նախապէս, բացի անյետաձգելի  
դէպքերից, յարաբերութեան մէջ մտնելով վե-  
րին իշխանութեան հետ վերադասութեան  
կարգով:

ե. Վճռահատութի ն անել պաշտօնից արձակ-  
ման ներկայացրած բարձրակայ ու ստորակայ  
սպաների և համապատասխան դասերի զօրական  
աստիճանաւորներին մասին նոյն կանոնագրքի  
57, 59 և 60 յօդւածի մէջ յիշւած կարգով:

բացի գնդերի հրամանատարներից և հաւասար  
 իշխանութիւն ունեցող անձերից, շրոնց վերա-  
 ձերմամբ այս իրաւունքը իրագործուում է միայն  
 Ռազմական Նախարարի իշխանութեամբ:

38. Ռազմական Նախարարը վայելում է սպա-  
 րազետի իրաւունքները զօրական իշխանու-  
 թեան ընդհանրապէս բոլոր անձերի վերաբեր-  
 ւմամբ:

39. Ռազմական Նախարարութեան գլխաւոր  
 վարչութիւնների պետերն իրաւունք ունեն՝

ա. Զօրավարներին, բարձրակայ ու ստորակայ  
 սպաներին և զօրական աստիճանաւորներին  
 նկատողութիւն և յանդիմանութիւն անել բա-  
 նաւոր կերպով, առաջագրութեամբ կամ  
 հրամանի մէջ:

բ. Բարձրակայ ու ստորակայ սպաներին և  
 համապատասխան դասերի զօրական աստիճա-  
 նաւորներին, բացառեալ այս հանոնագրքի 30  
 յօդւածի մէջ ցոյց տրւած անձերը, կալանքի  
 ենթարկել տանը և պահանոցում մինչև տաս-  
 նուշորս օր:

գ. Բարձր պաշտօնից ցածրի իջեցնել և

պաշտօնից հեռացնել այն զօրական աստիճա-  
նաւորներին, որոնց պաշտօնի նշանակելը վերա-  
պահւած է իրենց:

դ. Առաջարկել այս պաշտօնեաներին այն  
դէպքերում, երբ նրանց վրայ դրած պատիժներն  
անհետևանք են մնում, խնդիր տալ ծառայու-  
թիւնից հեռանալու (յօդ. 29), իսկ այդպիսի  
ցանկութիւն չյայտնողներին ներկայացնել ծա-  
ռայութիւնից արձակելու առանց նրանց ցան-  
կութեան, պահելով սոյն կանոնագրքի 58—59  
յօդւածներում ցոյց տրւած պատշաճաւոր պայ-  
մանները:

### ԳՆՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Զօրահան պետերի իշխանութեան աստիճանը  
կարգապահական պատիժներ տալու վերաբեր-  
մամբ յարուկ դէպքերում:

40. Կայագօրի պեռելը, պարէտները, ճամ-  
բարական հաւաքների և առանձին շրջանների  
պետերը, կամ նրանց փոխանորդները իրաւունք  
ունեն նաև իրենց ոչ ենթակայ զօրականներին  
կալանքի ենթարկելու. այնչափ, որչափ օլէն-

քով իրաւունք է վերապահուած նրանց իրենց  
 ստորագրեալ անձերի նկատմամբ, հետեւեալ  
 դէպքերում՝ 1), երբ զանցանքը վերաբերում է  
 հասարակական ապահովութեան կամ կարգի  
 խանգարման 2), երբ խախտուած են նրանց  
 յայտարարած որեէ գինւորական—ոստիկանա-  
 կան միջոցները, կամ նրանց սեփական պաշ-  
 տնական արժանապատուութիւնը. 3), երբ զան-  
 ցանքը կատարել է պահակում եղած ժամա-  
 նակ կամ նրանց յանձնուած վայրերում ծառա-  
 յութեան ուրիշ պարտականութիւններ կատա-  
 րելիս. 4), երբ զանցանքը կատարել է մի գին-  
 վորական, որը նոյն տեղում շունի կարգապա-  
 հական իշխանութիւն ունեցող իր անմիջական  
 պետերից ոչ մէկը, կամ կաշանաւորուած է ոչ  
 իւր ուղղակի իշխանաւորի հսկողութեան ներ-  
 քոյ. 5), երբ զանցանքը կատարել է արձա-  
 կուրդի կամ գործուղման մէջ գտնուող մի գին-  
 վորական, թէկուզ նրա անմիջական պետը նոյն  
 վայրում գտնուելիս լինի, և 6), երբ յանցաւորի  
 իոյն տեղում գտնուած ուղղակի պետը նրանցից  
 բաւելի պակաս իրաւունք ունի:

Յամենայն դէպս նրանք պէտք է իրենց տւած պատիժների մասին յայտնեն յանցաւորի իշխանաւորին:

41. Երբ պատահամբ զինւորականները միասին մի որևէ ծառայութեան գործ են կատարում այնպիսի պայմաններում, երբ նրանց փոխադարձ յարաբերութիւնները ճիշտ կերպով որոշւած չեն, այն ժամանակ պաշտօնով աւագը ճանաչւում է իբրև պետ և կրտսերի վերաբերմամբ վայելում է կոչումով իրեն վերապահւած կարգապահական իշխանութեան իրաւունքը, իսկ երբ պաշտօնները հաւասար են, նոյնպէս և երբ չի կարելի որոշել պաշտօնների յարաբերութիւնը ստորադասութեան կարգով, այն ժամանակ նոյն իրաւունքները վայելում է աստիճանով աւագը:

Սոյն կանոնը պահւում է և այն ժամանակ, երբ ջոկատները, կամ որ և է գործմասեր միասին ծառայութեան գործ են կատարում, կամ պատահաբար հանդիպում են իրար, եթէ նրանց պետերի փոխադարձ յարաբերութիւնները որոշւած չեն:

Ծանօթութիւն: Երբ կրտսեր պաշտօն կատարողը ժամանակաւորապէս աւելի բարձր պաշտօն է վարում, նրա աւագութիւնը որոշուած է ոչ թէ նրա ժամանակաւորապէս վարած պաշտօնով, այլ այն պաշտօնով, որը իսկապէս յատկացրած է իրեն:

42. Իւրաքանչիւր աստիճանով կամ կոչումով աւագը, երբ նրա ներկայութեամբ կրտսերը խախտում է գինւորական ծառայութեան կարգն ու կարգապահութիւնը, կամ հրապարակապէս տեղում հասարակական բարեվայելչութիւնը, ոչ միայն իրաւունք ունի այլ և պարտական է կրտսերին յիշեցնել այդ մասին և կարող է նրան առաջարկել գնալ մասը կամ պարէտական վարչութիւնը, կամ թէ վերջինիս փոխարինող հիմնարկութիւնը:

Այս պարտականութիւնը տրւում է՝ 1) բարձրակայ սպաների նկատմամբ՝ զօրավարների վրայ. 2), ստորակայ սպաների նկատմամբ՝ զօրավարների և բարձրակայ սպաների վրայ. և 3) գինւորների նկատմամբ՝ բոլոր սպաների վրայ:

Ծանօթութիւն: Այդ ժամանակ աւագը պարտաւոր է յայտնել իւր ազգանունն ու ծառայութեան տեղը և անձամբ կամ գրաւոր կերպով տեղեկացնել զօրամասի հրամանատարին կամ պարէտին

ձերբակալւածին նրա մօտ ուղարկելու պատճառների  
մասին:

43. Նրանք, որ չեն լսի աւագի յեշեցմանը  
կամ առաջարկութեանը և չեն գնայ իրենց գօ-  
րամասը կամ պարէտական վարչութիւնը կամ  
թէ վերջինիս փոխարինող հիմնարկութիւնը,  
յանցաւոր կհամարեն ատորադրելութեան  
խախտման մէջ և կենթարկեն գինւորական —  
քրէական օրէնքների մէջ դրա համար որոշւած  
պատժին:

### ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Կարգապահական պատիժներ տալու կարգը.

44. Կարգապահական պատիժներ տալու  
իրաւունքը պատկանում է ուղղակի պետերին,  
նոյնիսկ եթէ նրանք ժամանակաւոր են:

45. Ցածր աստիճանի պետերի յատկացրած  
իրաւունքը կարգապահական պատիժներ տալու  
նկատմամբ միշտ պատկանում է նաև բարձր  
աստիճանի պետերին:

46. Մերձաւոր պետը, երբ իր իշխանու-  
թեանը վերապահւած կարգապահական պատիժ-

ներք բաւական չի համարում ստորագրեալի  
կատարած զանցանքի կամ զանցառութեան կա-  
րորութեան պատճառով, այն ժամանակ յան-  
ցաւորի պատժի որոշումը, վերագասութեան  
կարգով, ներկայացնում է ի հայեցողութիւն  
բարձր իշխանութեան:

47. Բարձր իշխանաւոր անձերն անմիջապէս  
են որոշում կարգապահական պատիժները՝

ա). երբ զանցանքը կատարել է նրանց ներ-  
կայութեամբ, կամ երբ նրանք անձամբ նկա-  
տել են ստորագրեալի շեղումը ծառայութեան  
կարգից և յանցաւորի պատժի շափի որոշումը  
չեն ուզում թողնել նրա անմիջական պետին:

բ). երբ նախորդ յօդուածում (45) յիշուած  
դէպքւմ մերձաւոր պետը յանցաւորի պատ-  
ժելու մասին դիմում է նրանց:

գ). երբ զանգատով կամ բարձր իշխանաւորին  
հասած տեղեկագրով երեան է հանուում, որ  
մերձաւոր պետը բրեն ստորագրեալի յանցանքը  
թողել է առանց որ և է պատժի, կամ երբ  
բարձր իշխանաւորը կը գտնի, որ մերձաւոր  
պետը պատիժը յանցանքի յատկութեան կամ

կարևորութեան համապատասխան չափով չէ  
որոշել:

48. Բարձր պետք իրաւունք չունի կրասեր  
պետի որոշած կարգապահական պատիժը խրա-  
տութեան պատճառով փոփոխելու, եթէ մեր-  
ձաւոր պետք իրեն վերապահած իշխանութեան  
սահմանից դուրս չի եկել:

49. Պետին արգելւում է միևնույն յանցանքի  
համար մի քանի պատիժ որոշել, նմանապէս  
և մի պատիժը միացնել միւսի հետ, երբ այդ  
կարգապահական կանոնադրքով չի թոյլատրուած:

Նոյնպէս արգելւում է կալանք որոշել որ-  
պէս կարգապահական պատիժ, առանց դրակա-  
նապէս որոշելու կալանքի ժամանակակէտը:

50. Ամեն մի կարգապահական պատիժ պէտք  
է համապատասխանէ յանցանքի կարևորութեան:

Պատժի տեսակը և չափը նշանակելիս ի նկա-  
տի պիտի առնել յանցանքի յատկութիւնը,  
յանցանքին համընթաց հանգամանքները և յան-  
ցաւորի նախկին վարքը. իսկ ծառայութեան  
պարտականութիւնները չկատարելու վերաբե-  
րող գործերի մէջ, ծառայութեան մէջ գտնուե-

լու ժամանակը և ծառայութեան կարգն իմա-  
նալու աստիճանը:

Ճ1. Կարգապահական պատիժ որոշող պետք  
պէտք է հաւաստիանայ ստորադրեալի յանցա-  
ւոր լինելուն: Երբ կասկած կայ յանցանքի աս-  
տիճանի և նրա համընթաց հանգամանքների  
մասին, կամ այն մասին, թէ պէտք է արդեօք  
ըստ յանցանքի յատկութեան, բաւականանալ  
միայն կարգապահական պատժով, թէ յանցա-  
ւորին դատի մատնել, — այդ ժամանակ հետաքըն-  
նութիւն է կատարուում:

Ճ2. Կարգապահական պատիժը իստանում է,  
երբ յանցաւորը մի քանի անգամ նկատել է  
նոյն տեսակի, կամ յատկութեամբ տարբեր  
զանցանքների մէջ, բայց տրւած պատիժներն  
անհետեանք են մնացել, կամ երբ յանցանքը  
զործել է ծառայութեան պարտականութիւն-  
ները կատարելու ժամանակ, կամ թէ միացած  
է զինւորական աստիճանայարգութեան խախտ-  
ման հետ, կամ յանցանքի հետեանքը եղել է  
որ և է անկարգութիւն: Կարգապահական պա-  
տիժը իստանում է նոյնպէս, երբ այդ անհրա-

ժեշտ է օրինակի համար, կամ առելն մեծ կարգապահութեան համար:

53. Պատիժները նշանակուած են կամ գրաւոր կերպով, յատուկ առաջադրութեամբ այդ մասին, կամ հրամանի մէջ, կամ թէ բանաւոր կերպով՝ պետի անմիջական կարգադրութեամբ:

54. Սպանելի և գորական աստիճանաւորների կարգապահական պատիժները նշանակուած են միշտ գրաւոր կերպով, բացի նկատողութիւններից և յանդիմանութիւններից, որոնք լինում են բանաւոր կերպով: Այս կանոնը չի կիրառուում այն դէպքերում, երբ պատիժը անյետաձգելի է և պէտք է իսկայն եեթ տեղում ի կատար ածել. բայց և այս դէպքերում հետագայում առաջադրութիւններով կամ հրամանների մէջ յայտարարուած է պատժի պատճառը:

55. Կարգապահական պատիժները որոշուած են հրամանի մէջ, երբ դումարատապետի կարգապահական իշխանութիւնից վեր են. միւս բոլոր պատիժները կարող են որոշուել և բանաւոր կերպով, գրեւով միայն պատիժների մատեանի մէջ:

56 Գերակետիկ զինւորներին կարգապահա-  
կան եղանակով ծառայութիւնից արձակելուց  
առաջ (յօդ. 16. կէտ բ), մերձաւոր պետի կար-  
գադրութեամբ պէտք է քննութիւն կատարելի  
յանցանքի տեսակի և յանցաւորի վարքի մասին, և  
ապա այդ քննութիւնը պատիժների մատեանի քաղ-  
լածքի հետ միասին ներկայացել զնդի հրամա-  
նատարին, որի հայեցողութիւնից և կախում է  
գերակետիկ զինւորի ծառայութիւնից արձակ-  
ւելը:

Ծանօթութիւն: Գերակետիկ զինւորներին ծառա-  
յութիւնից արձակելիս նրանց արձակման գրերի մէջ  
չեն նշանակուած արձակման պատճառները:

57. Կառավարութեան հրամաններով նշանակ-  
ւած բարձրակայ ու ստորակայ սպաների և զօ-  
րական աստիճանաւորներին կարգապահական  
եղանակով (յօդ. 29) արձակումը ծառայութիւ-  
նից՝ միշտ կատարուած է նոյնպիսի հրաման-  
ներով, իսկ միւսներինը՝ այն հիմնարկութեան  
կամ անձի հրամանով կամ առաջագրութեամբ,  
որին օրէնքով վերապահւած է պաշտօնի նշա-  
նակելու իրաւունքը:

Ծառայութիւնից արձակելուց առաջ պէտք

է՛ 1) մերձաւոր պետի անմիջական կարգադրութեամբ քննութիւն կատարել յանցանքի և յանցաւորի վարքի մասին. 2) այն պետի թոյլաւութեամբ, որից, սոյն կանոնագրքի 60-րդ յօդաւածի հիման վրայ, կախաւծ է ծառայութիւնից հեռացնելու վերջնական վճիռը, յանցաւորին պէտք է առաջարկել հրաժարական խնդիր տալ, և միայն այն դէպքում, երբ իշխանութեան որոշած ժամանակամիջոցին յանցաւորը հրաժարական չներկայացնէ, կարելի է վերադասութեան կարգով ներկայացնել նրան ծառայութիւնից արձակելու: Ծառայութիւնից արձակւողի պետք, երբ վերադասութեան կարգով դիմում է Սպարապետին, որ նա թոյլ տայ յանցաւորին առաջարկել հրաժարական տալու, այդ մասին տրւած զեկոյցի հետ միասին ներկայացւում է թէ կատարած քննութիւնը, և թէ քաղաւոր այբբենական մատեանից և արձակւողի ծառայութեան ցուցակից:

58. Երբ սպան կամ զօրական աստիճանաւորը ծառայութեան շվերաբերւող յանցաւոր արարքի համար դատարանով ենթարկւում է մի

պատժի, որ զհետ չի բերում ծառայութիւնից արձակում, այն ժամանակ դատապարտելի պետիւն է վերապահում, եթէ նրան ծառայութեան մէջ թողնելը անհնարին է համարում, առաջարկել նրան խնդիր տալ ծառայութիւնից արձակելու: Երբ դատապարտելը վերոյիշեալ խնդիրը պետի սահմանած ժամանակին չի ներկայացնում, այն ժամանակ նա վերադասութեան կարգով ներկայացում է ծառայութիւնից արձակելու:

59. Բարձրակայ ու ստորակայ սպաների և զօրական աստիճանաւորների ծառայութիւնից արձակման վերջնական վճիռը, նախորդ 58 յօդ. հիման վրայ, պատկանում է Ռազմական Նախարարին:

60. Ծառայութիւնից արձակող սպաներն ու զօրական աստիճանաւորները, այս Կանոնադրքի 29 և 58 յօդաձևերի համաձայն, իրաւունք ունեն ծառայած տարիների համեմատ կենսաթոշակ ստանալու:

61. Զօրավարները, զնդի հրամանատարների իրաւունք ունեցող բարձրակայ սպաները և զօ-

րական իշխանութեան մէջ նրանց համապատաս-  
 խան պաշտօններ վարող անձերը, ծառայու-  
 թեան վերաբերեալ յանցանքներէ համար, որոնք  
 թէպէտ և զհետ չեն բերում դատարանով ար-  
 ձակում ծառայութիւնից, բայց իրենց նշանա-  
 կութեամբ կամ կրկնաժ լինելովը վկայում են,  
 որ յանցաւորը անհամապատասխան է իր ունե-  
 ցած դիրքին, կամ նա ակներև կերպով անփոյթ  
 է գտնւում զէպի իր պարտականութիւնները,  
 կամ թէ անշնորհակ է այդ պարտականու-  
 թիւնները կատարելու, նմանապէս և ծառայու-  
 թիւնից դուրս կատարած պախարակելի արար-  
 մունքների և վարքի համար կարող են կարգա-  
 պահական եղանակով, կառավարութեան կար-  
 գադրութեամբ ծառայութիւնից արձակել,  
 որի ժամանակ պահւում են այս կանոնագրքի  
 58 և 61-րդ յօդւածներում յիշւած կանոնները:

62. Երբ վաշտի կրտսեր սպաները և վաշտա-  
 պետներն ու գումարտապետերը կարգապա-  
 հական պարտիժներ են նշանակում, նրանք պէտք  
 է այդ մասին զեկուցեն կամ տեղեկագրեն վե-  
 րադասութեան կարգով, կրտսեր սպաները՝ վաշ-

տապեալին, իսկ վաշտապեաները և գուճար-  
տապեալերը՝ գնդի հրահանատարին:

## ԳՒՆՆԵՐՈՐԴ

Կարգապահական պատիժներն ի կատար ածելու  
կարգը:

63. Ձինւորական պետերի նշանակած կար-  
գապահական պատիժները, եթէ միայն նոքր չեն  
հանդիպում առանձին ս.բ.գ.ներին, պէտք է իս-  
կոյն և եթ ի կատար ածեն: Եթէ կարգապա-  
հական պատիժը նշանակել է բարձր պետը ան-  
ձամբ, այն ժամանակ նրա հայեցողութիւնից է  
կախւած, թէ ինքն անձամբ կկարգադրի պա-  
տիժն ի կատար ածել, թէ այդ կյանքնաւորի  
յանցաւորի մերձաւոր պնտին:

64. Պետի կարգադրութեան դէմ գանգատ  
տալով, ստորագրեալի վրայ դրւած կարգապա-  
հական պատժի ի կատար ածումը չի առկայւում,  
քանի դեռ այդ պատժի վերացման մասին բար-  
ձր պետից կարգադրութիւն չի եղել:

65. Սպաներին և զինւորներին ամսով կա-  
շանք նշանակելիս՝ ամիսը միշտ հաշւումէ երե-  
սուն օր:

66. Ջինւորների կալանքները հեռեւտաներն են՝ ա). Հասարակ կալանք, երբ յանցաւորները պահուում են լուսաւոր դիպահում, կասարելով, պետի հայեցողութեամբ, ծառայութեան պարտականութիւնները: Նրանք կերակուրը ստանում են վաշտից:

բ). Խիստ կալանք, երբ կալանաւորները ջուղջուղ են պահուում նոյնպէս լուսաւոր դիպահի մէջ: Նրանք նոյնպէս կերակուրն ամեն օր ստանում են վաշտից:

67. Թառն կալանք նշանակելիս՝ պէտք է որոշել, թէ յանցաւորը քանի օր պէտք է պահել խիստ կալանքի մէջ և քանի օր հասարակ կալանքի մէջ: Խիստ կալանքի ժամանակամիջոցը չպէտք է խառը կալանքի ամբողջ ժամանակի կէսից աւելի լինի, և չպէտք է նշանակել անընդհատ աւելի, քան ութ օր: Հասարակ և խիստ կալանքների ժամանակամիջոցը պէտք է լինի առնւազն մի շաբաթ:

68. Թէ խիստ և թէ հասարակ կալանքի ենթարկւած զինւորներին արդելոււմ է ոգելից խմիչքներ դործածել, դանադան տեսակի խա-

դեր, նոյնպէս և կողմնակի անձանց հետ յարա-  
բերութիւն ունենալ:

69. Ս.յն զինւորները, որոնք կալանքի փո-  
խանակ կանգնեցուամ են հրացանն ուսին  
(յօդ. 18), չեն կարող հեռանալ այնտեղից, որ-  
տեղ իրենց կանգնեցրել են:

70. Այս կանոնագրքի 16 ըդ յօդուածում յիշ-  
ւած շարային գերակենսիկ ծառայող զինւոր-  
ները պահանջուամ կալանքի ենթարկելիս,  
երբ պահանոց չկայ, կամ պահանոցում գետե-  
ղարան չկայ, կալանաւորում են իրենց գօրա-  
մասերի մէջ առանձին սենեակում, մասի օրա-  
պահ սպայի հսկողութեան ներքոյ, կամ պետի  
հայեցողութեամբ դրւած ժամապահի պահպա-  
նութեան տակ: Նրանք կալանքի մէջ պահւում  
են յամենայն դէպս սպաներից և զինւորներից  
դատ:

71. Սպաների և գօրական առաիճանաւորների  
կալանքները հետևեալներն են՝ ա). Տանու կա-  
լանք—յանցաւորները պահւում են իրենց բնա-  
կարանում, կատարելով կամ չկատարելով ծա-  
ռայութեան պարտականութիւնները. զէնքը  
նրանցից չի առնւում:

բ). Կալանք պահանջուամ — յանցաւորները պահուամ են պահանջուամ, առանց ծառայութեան պարտականութիւնները կատարելու: Պահանջ չլինելու դէպքուամ այս տեսակ կալանքի ենթակայ սպաները և դորական աստիճանաւորները պահուամ են իրենց գնդի մէջ առանձին սենեակուամ գնդի օրապահ սպայի հրահողութեան ներքոյ, իսկ բացառիկ դէպքերուամ, պետի հայեցողութեամբ, իրենց սենեակի մօտ դրամ ժամապահի պահպանութեան տակ:

72. Կալանաւորը, զանելիս լինի նա պահանջուամ թէ գնդի մէջ առանձին սենեակուամ, առնուամ է նրանից ըստ ծառայութեան տեսակի յատկացրած գէնքը, ի բաց չ'առեալ նաև այն գէնքերը, որոնց վրայ կան շքանշաններ և ուրիշ զարդարանքներ:

73. Կալանաւորից առնուած գէնքը պահուամ է կալանաւորման ընթացքուամ, դորամասի պետի մօտ:

74. Հարբածների վերաբերմամբ կարգապահական պատիժը ի կատար չի ածուամ. նոյնպէս չի և կատարուամ նրա յանցանքի քննութիւնը:

բացի նախնական կալանքից. թէ գործի քննու-  
թիւնը և թէ պատիժը յետաձգուում է, մինչև  
որ նա սթափուի:

Մանօրուքիւն: Այս յօդուածի պահանջը չկատար-  
ելը համարուում է լուրջ կորուստ պահանջանք յանցանք:

## ԳՆՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԴ

Պատժուածների դասը.

75. Իւրաքանչիւր վաշտի մէջ պահուում է  
պատժուածների դասի մէջ գտնուող բոլոր զին-  
ւորների ցուցակը: Սրանից անկախ գնդի մէջ  
ևս պահուում է նոյն դասի զինւորների ցու-  
ցակը:

76. Պատժուածների դասի մէջ գտնուող զին-  
ւորները չեն արժանանում անբասիր ծառայու-  
թեամբ ձեռք բերուող առաւելութիւններին, չեն  
կարող ենթապատ կամ թելանի դառնալ, չեն  
կարող վերակարգել պատուաւոր պահակի մէջ,  
իբրև ժամապահ դրել զբօշի մօտ և ուրիշ  
պահակէտերում, որոնք առանձին նշանակու-  
թիւն ունեն, նոյնպէս և չեն կարող բանքերլինել  
և լրատար նշանակել իշխանաւոր անձերի

մօտ, և ոչ մի դէպքում չեն նշանակւում աւա-  
զի փոխանակ և, ընդհանրապէս, պատուաւոր  
քնաւորութիւն ունեցող կամ առանձին վստա-  
հութիւն պահանջող ծառայութեան պարտակա-  
նութիւնները կատարելու: Իրա փոխարէն նրանք  
նշանակւում են ուրիշ վերակարգերի մէջ և ա-  
ռաւելապէս տնտեսական և այլ աշխատանքների:  
Նրանք, պատժւածների դասի մէջ գտնւելիս,  
ժամանակաւոր արձակուրդ չեն ստանում և բա-  
կից հեռանում են միայն վաշտապետի թոյլ-  
արւութեամբ և ոչ ուշ, քան երեկոյեան անւա-  
նակոչը. միաժամանակ կարգապահական յան-  
ցանքների համար, զնդի պետի հայեցողութեամբ,  
կարելի է արգելել նրանց հեռանալ դօրանոցից  
կամ բակից՝ մինչև երկու ամիս ժամանակով:

77. Այն զինւորներին, որոնք զրկւելով են-  
թասպայական կոչումից փոխադրւած են պա-  
տրժւածների դասի մէջ, նորից ենթասպայու-  
թիւն տալը թոյլատրւում է յիշեալ դասից  
գուրս դալուց ոչ առաջ:

78. Պատժւածների դասի մէջ կարգւած  
զինւորները, բացի Զօրական Օրէնքների Հաւա-

Քի XV՝1-րդ գրքի 87. րդ յօդուածի մէջ (հրատ. 3)  
 յիշուած դէպքից, կարող են պատժուածների դա-  
 սից հանուել, եթէ նրանք անբասիր կերպով  
 ծառայել են մի ամբողջ տարի, սկսած այն  
 օրից, երբ կարգապահական մասի մէջ կամ  
 զինւորական բանաւում բանաւարկութեան պա-  
 տիժը, կամ զինւորական բանտի մենաւոր բան-  
 տարկութեանը փոխարինող պատիժը կրել  
 վերջացրել են: Իսկ առանձնապէս լաւ և օրի-  
 նակելի վարք ունենայու և ծառայութեան պար-  
 տականութիւնները ճշտութեամբ կատարելու  
 դէպքում, նրանք պատժուածների դասից դուրս  
 հանուել կարող են յիշեալ պատիժները կրելուց  
 վեց ամիս յետոյ, իբրև պարգև սխրագործու-  
 թեան՝ նաև այդ ժամանակից աւելի շուտ, բայց  
 միայն բրիգադի պետի թոյլտուութեամբ:

79. Պատժուածների դասի մէջ գտնւող զին-  
 ւորներին ընդհանուր հիմունքներով պահեստի  
 մէջ հաշուելիս և հրատարի արձակելիս, եթէ  
 նրանց պատիժը մինչ այդ չի ներուել, կարող  
 են ներում ստանալ բրիգադի պետի թոյլտու-  
 թեամբ, անկախ նախընթաց 78-րդ յօդուածի

մէջ յիշւած ժամանակակէտից, բայց միայն մի պայմանով, որ նրանք ընդհանրապէս լուս վարք ունեցած լինին և, առանձնապէս, եթէ նրանք դատապարտւած են անւանարկող բնոյթ չունեցող արարքի համար:

80. Պատժւածներէ դասի մէջ տեղափոխւած զինւորներէ պատիժը ներելու համար՝ նախորդ (79) յօդւածով յիշւած մի տարւայ ժամանակակէտը տարածւում է ընդհանրապէս այն բոլոր զինւորներէ վրայ, որոնք ենթարկւած են որ և է պատժի՝ ծառայութեան ցուցակի պատժի սիւնակի մէջ մուծելով հանդերձ:

## ԳԼՈՒԽ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ

Պատիժների մատեանը.

81. Իւրաքանչիւր կարգապահական պատիժ, բացի նկատողութիւններից և յանդիմանութիւններից, որոնք բանաւոր են արւում, մուծւում է մատեանի մէջ:

82. Իւրաքանչիւր գնդի մէջ պէտք է երկու տեսակ մատեան լինի՝

ա). Զինւորների պատիժների մատեան, որը

պահուում է իւրաքանչիւր վաշտի մէջ, և

բ). Սպաների ու զօրական տատիճանաւորների այբբենական մատեան, որն ընդհանուր է ամբողջ գնդի համար:

83. Ձինւորների պատիճների մատեանի մէջ մուծուում են նոյնպէս դասարանով որոշուած պատիճները:

84. Ձինւորների պատիճների մատեանի իւրաքանչիւր յօդուած պէտք է վաւերացւի վաշտապետի ստորագրութեամբ: Գումարտապետը, իսկ հեծելազօրի մէջ հեծելազնդի հրամանատարի շարային մասի օգնականը, պարտական են այս մատեանները ստուգել ամեն ամիս կամ վաշտերի ու հեծելավաշտերի զննութեան ժամանակ, և մատեանի մէջ իւրաքանչիւր զինւորին համապատասխան թերթի վրայ ստորագրելով, հաւասարել տրւած պատիճների կանոնաւորութիւնը կամ դտած շեղումները: Գնդի հրամանատարը այս մատեանները ստուգում է ըստ իր հայեցողութեան, բայց ամենաքիչը տարին երկու անգամ. տրւած պատիճների կանոնաւորութեան կամ շեղումների հաւասարումը, սա-

կայն, նրա համար պարտադիր չէ:

85. Սպաների և զօրական աստիճանաւորների այբբենական մատեանի մէջ մուծուած են սպաներին և զօրական աստիճանաւորներին թէ կարգապահական եղանակով և թէ դատարանով տրւած պատիժները, բայց երբ ստորակայ սպային բարձրակայ սպայի աստիճան է տրւում, իսկ զօրական աստիճանաւորը նշանակուած է եօթներորդ դասից ոչ ցած պաշտօնի, այն ժամանակ այբբենական մատեանում նրանց համար նոր թերթեր են բացուած և առաջայ ստացած պատիժներից մէջը գրուած են միայն այն պատիժները, որոնք գոյութիւն ունեցող կանոնների հիման վրայ գրուել են նրանց ծառայութեան ցուցակի մէջ: Եթէ սպան կամ զօրական աստիճանաւորը ծառայութեան ցուցակի պատժական սիւնեակի մէջ մուծուած պատժի ներքում են ստացել, այն ժամանակ այբբենական մատեանի մէջ այդ մասին յիշատակուած է:

86. Սպաների և զօրական աստիճանաւորների այբբենական ցուցակի իւրաքանչիւր յօդուածը վաւերացնում է գնդի համհարդը:

87. Սպաներին, աստիճանաւորներին և զինւորներին մի զօրամասից միւսը փոխադրելիս, կամ գործուղումից յետ ուղարկելիս, պատշաճաւոր գրաւոր տեղեկութիւնների հետ միասին ուղարկուամ է և քաղաքը այրբենական մատենանից կամ պատիժների մատենանից:

88. Սպաների և զօրական աստիճանաւորների այրբենական մատենանը և զինւորների պատիժների մատենանը տեսչական քննութեան ժամանակ ներկայացուամ են քննութիւն կատարող պետին, որւամ պատիժների կանոնաւորութիւնը ստուգելու համար:

89. Կարգապահական պատիժները չպէտք է մոլժեն ծառայութեան ցուցակի պատժական սիւնեակի մէջ. սակայն ծառայութեան ընթացքի սիւնեակի մէջ, առանց առիթները նշանակելու, յիշատակութիւն է լինում հետևեալ դէպքերում՝

ա)՝ երբ սպաներից կամ զօրական աստիճանաւորներից մէկը հրամանատարութիւնից հեռացուամ է, կամ բարձր պաշտօնից ցածր է իջեցուամ, կամ թէ ծառայութիւնից արձակուամ է:

բ). Երբ զինւորներից մէկը բարձր պաշտօնից ցածր պաշտօնի է իջեցւում, ցածր կոչումի կամ պակաս կոպարի է փոխւում, զրկւում է ենթասպայական կամ թելանու կոչումից, ինչպէս և աւագ կարգի ապաշար զինւորի կոչումից:

## ԳՆՈՒՄ ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

### Գանգատներ.

90. Գանգատ կոչւում է այն յայտը որ զինւորականը անում է իր վերաբերմամբ, պետի ապօրինի կամ անարդար գործողութիւնների և կարգադրութիւնների մասին, ինչպէս և ծառայութեան համար սահմանւած իրաւունքներին և առաւելութիւններին չարժանացնելու կամ որոշւած թշակը չատանալու մասին:

91. Իւրաքանչիւր զինւորականի թոյլատրւում է գանգատել միմիայն անձնապէս իրեն համար: Գանգատել ուրիշի փոխանակ, կամ մի քանի հոգի միասին, նմանապէս և գանգատների մասին խորհրդածելու համար խմբումներ և ժողովներ անելն արգելւում է:

92. Գանգատելն արգելւում է՝ ժամասացութեան ժամանակ, շարքի մէջ և, ընդհանրապէս

Տառայութեան պարտականութիւնները կատարելիս:

93. Գանգատուել չի կարելի պատժի խստութեան համար, եթէ պետք իրեն վերապահած կարգապահական իշխանութիւնից չի գերազանցել:

94. Գանգատներն արւում են կամ տեսչական հարցումների և տեսչական գործակալների ժամանակ, կամ գրանցից դուրս: Գանգատներ թողատրւում է անել թէ բերանացի և թէ գրաւոր կերպով և արւում են ուղղակի այն պետին, որին անմիջապէս ենթարկւում է այն անձը, որի վրայ գանգատ է տրւում, իսկ երբ գանգատողը չգիտէ, թէ իր իրաւունքները խախտողն իսկապէս ով է, այն ժամանակ գանգատը տրւում է վերադասութեան կարգով:

95. Երբ գանգատը զինւորի պետի վրայ է տրւում, գանգատողը կարող է գանգատով զիմել անմիջապէս վաշտապետին, նախապէս յայտնելով այս մասին այն անձի անմիջական պետին, որի վրայ գանգատ է տրւում:

96. Երբ իշխանաւորը գանգատների հըրցում

է անուամբ, այն ժամանակ թոյլատրուամ է գան-  
 գատուել թողոր պետերի վթայ. թէ բերանացի և  
 թէ գրաւոր կերպով գրաւոր գանգատները պէտք  
 է տրւեն հարցումի ժամանակից սկսած  
 մի օրւայ (24 ժ.) ընթացքում, իսկ հարցումի  
 ժամանակ բացակայողներին թոյլատրուամ է  
 գանգատ տալ նաև այդ ժամանակամիջոցից ա-  
 ւելի ուշ:

97. Գրաւոր գանգատին պէտք է ստորագրած  
 լինի գանգատողը, իսկ եթէ նա անգրագէտ է,  
 մէկ ուրիշը նրա խնդրանօք, հակառակ դէպքում  
 գանգատը անհետեանք է մնում:

98. Նրանք, որ իրենց ներկայացրած գան-  
 գատի մասին մի ամսւայ ընթացքում ոչ մի  
 տեղեկութիւն կամ վճռահատութիւն չեն ստա-  
 նալ, իրաւունք ունեն արդարադատութեան  
 մերժման համար վերագատութեան կարգով ա-  
 ւելի բարձր իշխանաւորին գանգատ տալ:

99. Երբ երևան գայ, որ գանգատը դիտմամբ  
 սուտ է, այն ժամանակ յանցաւորը գատի է  
 մատնւում զինւորական պատժական կանոնա-  
 գրքի 172-րդ յօդւածի հիման վրայ:

100. Եթէ գանգատ է արւում կարգը կամ վայելչութիւնը խանգարելով և գանգատ տւողը դրա համար պատժի է ենթարկւում, չնայելով դրան՝ գանգատի վերաբերմամբ պէտք է պատշաճաւոր քննութիւն կատարուի:

101. Իւրաքանչիւր վաշտ պէտք է ունենայ մի գանգատի գիրք, որի մէջ վաշտապետն անձամբ, կամ վերին իշխանութեան կարգադրութեամբ, գրի է առնում ընդհանրապէս գիււորների բոլոր գանգատները, նշանակելով այդ մասին արած կարգադրութիւնները կամ վճռահատութիւնները, նմանապէս և դրւած պատիժը, եթէ գանգատը անիրաւացի է եղել:

102. Գանգատի գրքերը վաշտերին գնդերի հրամանատարներն են տալիս իրենց ստորագրութեամբ, ժապաւենեալ և պետական կնիքով:

103. Տեսչական զօրատեսերի ժամանակ գանգատի գրքերը ներկայացւում են, գանգատների վերաբերմամբ արւած կարգադրութիւնների կանոնաւորութիւնը ստուգելու համար:

## ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Վարչական կարգով որոշելի դրամական տոյժերի վասին.

104. Կարգապահութեան խախտման համար և զինւորական բարեկայելութեան դէմ գործած թեթև դանցանքների համար դրամական տոյժեր, իբրև պատիժ, չեն թոյլատրուում:

105. Եթէ զինւորական իշխանութիւնը և կարգապահական պատժի ենթակայ թեթև յանցանքի հետևանքը լինում է պետական և հասարակական մի վնաս, այն ժամանակ պետք, կարգապահական պատժից անկախ, նաև քրիստական միջոցներ է ձեռք առնում վնասի քանակը յայտաբերելու և յանցաւորին այդ վնասը հատուցանել տալու. դրամական տոյժի չափը, սակայն, որոշում է վաշտապետից ոչ ցած պետք:

106. Զինւորական իշխանութեան դրած դրամական տոյժի անկանոնութեան դէմ դանդառները տրուում են ընդհանուր կարգով:

## ԳԼՈՒԽ ՏԱՄՆԶՈՐՍԵՐՈՐԴ

Պատուոյ դատարան:

107. Պատուոյ դատարանները հիմնուում են

զինւորական ծառայութեան արժանապատուութիւնը պահպանելու և սպայական կոչման առաքինութիւնը պաշտպանելու համար: Այս դատարաններէ դատին ենթակայ են՝ ա). Այն արաքքները, որոնք վայել չեն զինւորական պատւի, ծառայութեան արժանապատուութեան, բարոյականութեան և ազնւութեան գաղափարներին, և բ). Սպաների մէջ պատահած դժտութիւնները:

108. Այն արաքքները, որոնք միացած են ծառայութեան պարտականութիւններէ և զինւորական աստիճանայարգութեան խախտման հետ, կամ դէմ են ծառայութեան պարտքին՝ բռնորովին դուրս են հանուում պատուոյ դատարանի իրաւասութիւնից:

109. Այն հարցի լուծումը, թէ արդեօք գործը պատուոյ դատարանի քննարկութեանը ենթակայ է, թէ ոչ՝ վերապահուում է այն պետին, որի իշխանութեան տակ է գտնուում այդ դատարանը:

110. Պատուոյ դատարանի դատին ենթակայ են գործոն ծառայութեան մէջ գտնուող՝ ա). ստորակայ սպաները և բ). այն բարձրակայ սպաները, որոնք չունին առանձին զօրամասի հրամանատարի իրաւունք:

Զօրական վարչութիւնների, հաստատութիւնների ու հիմնարկների (համբարակային, զօրական—գատական և նմանների) սպաները, նոյնպէս և զօրական աստիճանաւորները, ենթակայ են պատուոյ գատարանի դատին՝ այդ մասին արւած յատուկ կարգադրութիւնների հիման վրայ:

111. Ստորակայ սպաների պատուոյ գատարանները հիմնուում են առանձին զօրամասերում, նայած նրանց սպայական կազմին: Այդ կազմի բաւական լինել—չլինելու հարցի լուծումը վերապահուում է Սպարապետին:

112. Ստորակայ սպաների պատուոյ գատարանը կազմում է 5 անդամներից, որոնք ընտրւում են մինչև ընտրութեան օրը զօրամասում առնւազն մի տարի ծառայած բարձրակայ սպաներից, (բացի առանձին մասերի հրամանատարներից), գլխապետներից և փոխ-գլխապետներից: Բացի վերևում որոշւած թւով անդամներից՝ իւրաքանչիւր պատուոյ գատարանի համար ընտրւում են երկու անձնափոխանորդներ, որոնք

անդամների բացակայութեան դէպքում նրանց տեղն են անցնում:

113. Բարձրակայ սպաների պատույ դատարանները հիմնւում են բրիգադներում: Այս կազմի բաւական լինել—չլինելու հարցի լուծումը վերապահւում է Սպարապետին:

114. Բարձրակայ սպաների պատույ դատարանը կազմւում է հինգ անդամներից, որոնք ընտրւում են իւրաքանչիւր գնդից երկուական հոգի և հրետազօրի բաժնեակից մի հոգի: Բացի որոշւած թւով անդամներից, իւրաքանչիւր պատույ դատարանի համար ամեն մի առանձին զօրամասից մի մի անձնափոխանորդներ են ընտրւում, որոնք անդամների բացակայելու դէպքում նրանց տեղն են անցնում:

115. Սպարապետն իրաւունք ունի բարձրակայ սպաների դատարաններից մէկի քննութեանը տալու այնպիսի շարային զօրամասերի բարձրակայ սպաների արարքները, որոնք չեն մշտնւում այն զօրական միացումների կազմի մէջ, ուր հիմնւած են այդպիսի դատարաններ:

Այդ ժամանակ, յիշեալ զօրամասերի մէջ

ընտրւում է պատույ դատարանի մէկական ան-  
 դամ, որը պարտադիր կերպով այդ դատարանի  
 կազմի մէջ է մտնում, անդամներից կրտսերի  
 փոխանակ, որ այս դէպքում դատարանի կազ-  
 մից դուրս է գալիս (114-րդ), այնպէս որ  
 պատույ դատարանը միշտ կազմւած լինի հինգ  
 անդամից: Այս զօրամասերում նոյնպէս, բացի  
 մի անդամից, ընտրւում է նաև մէկական անձ-  
 նափոխանորդ:

116. Զօրական վարչութիւնների, շտաբների,  
 հաստատութիւնների, առանձին հիմնարկների  
 (համբարակային, զօրական — սանիտարական,  
 զօրական — դատաստանական և նմանների) սպա-  
 ների և զօրական աստիճանաւորների համար  
 նոյնպէս կարելի է հիմնել պատույ դատարաններ,  
 որոնց կանոնադրութիւնները մշակւում են,  
 այս կանոնագրքի հիմնական սկզբունքները պահ-  
 պանելով, գլխաւոր վարչութիւնների և հիմնարկ-  
 ների պետերի ձեռքով և գործադրւում են Ռազ-  
 մական նախարարի հաստատելուց յետոյ:

117. Բարձրակայ ու ստորակայ սպաների  
 պատույ դատարանի անդամներ շեն կարող ըն-

տրւել այն սպաները, որոնք յանցանքների կամ  
 զանցանքների համար քննութեան կամ դատի  
 տակ են գտնուում, նմանապէս և նրանք, որ  
 հակօրէն արարքների համար դատավճիռներով  
 կալանքի են ենթարկւել պահանոցում, ծառայ-  
 ցութեան վերաբերեալ որոշ իրաւունքների և  
 առաւելութիւնների սահմանափակումով, կամ  
 ենթարկւել են ուրիշ աւելի խիստ պատժի, և  
 նրանք, որ այսպիսի պատիժներ զհետ բերող  
 յանցանքների կամ զանցանքների համար դատի  
 տակ գտնուելով, չեն արդարացել դատավճիռ-  
 ներով: Չեն կարող պատւոյ դատարանի ան-  
 դամներ ընտրւել նոյնպէս և այն սպաները, որ-  
 ռոնք երբ և է ծառայութիւնից հեռացրած են  
 եղել այս դատարանների դատավճռով:

118. Ստորակայ սպաների պատւոյ դատարան-  
 նի անդամների թւի մէջ պարտադիր կերպով  
 պէտք է ընտրւի գոնէ մի բարձրակայ սպայ.  
 երբ զօրամասում կայ միայն մի բարձրակայ  
 սպայ, սա, եթէ բաւարարում է այս կանոնա-  
 գրքի 112 և 117 յօդ. մէջ դատարանի անդամ-  
 ների համար յիշւած պայմաններին, առանց յա-

տուկ ընտրութեան մտնում է ստորակայ սպաների պատույ դատարանի կազմի մէջ. իսկ եթէ այս բարձրակայ սպան վերոյիշեալ պայմաններին չի բաւարարում, նոյնպէս և եթէ զօրամատում բոլորովին չկայ բարձրակայ սպայ, այն ժամանակ դատարանի կազմի մէջ մտնելու համար պէտք է ընտրել առնւազն մի գլխապետ:

119. Ստորակայ սպաների պատույ դատարանի անդամների ընտրութիւնը կատարւում է հետևեալ կերպով՝ զօրամասին տւած հրամանով ընտրութեան օրը, տեղը և ժամանակը յայտարարելուց յետոյ, զօրամասի բոլոր առկայ եղող այն բարձրակայ ու ստորակայ սպաները, որոնք ապայական աստիճանում ծառայել են մինչև ընտրութեան օրը ոչ պակաս քան երեք տարի, իսկ զօրամասի մէջ ոչ պակաս քան մի տարի, հաւաքւում են նշանակւած տեղը և, ներկայ եղողներից աւագի հրաւերով, սկսում են ընտրութիւնը: Դրա համար իւրաքանչիւր ընտրող, առաջնորդւելով այս Կանոնագրքի 112, 117 և 118 յօդւածներով, իր ընտրելիք թեկնածուի ազգանունը գրում է թերթիկի վրայ, առանց

իր ստորագրութեան: Ներկայ եղողներից աւագը այս թերթիկները հաւարում է և հաշուում իւրաքանչիւր թիկնածուի ստացած ձայները: Թեկնածուներից ամենաշատ թւով ձայն ստացող եօթը հոգին համարւում են ընտրւած. նրանցից երկուսը, որ աստիճանով կրտսեր են, նշանակւում են անձնափոխանորդ:

120. Բարձրակայ սպաների պատույ դատարանի անդամների ընտրութիւնը կատարւում է հետևեալ կերպով՝ բրիգադին տրւած հրամանով ընտրութեան օրը և ժամը յայտարարելուց յետոյ, իւրաքանչիւր առանձին զօրամասի առկայ բարձրակայ սպաները (բացի առանձին մասերի պետերից) հաւարւում են իրենց մասի շտաբը և, ներկայ եղողներից աւագի հրաւերով, սկսում են ընտրութիւնը: Նրա համար իւրաքանչիւր ընտրող, առաջնորդւելով այս կանոնագրքի 114, 115 և 117 յօդւածներով, թերթիկի վրայ գրում է իր զօրամասի բարձրակայ սպաներից (բացի մասի հրամանատարից) իր ընտրելի թիկնածուների ազգանունները, առանց իր ստորագրութեան: Ներկայ եղողներից աւագը

այս թերթիկները հաւաքում է և հաշուում իւրաքանչիւր թեկնածուի ստացած ձայները: Թեկնածուներից ամենաշատ թւով ձայն ստացող երկու հոգին համարւում են ընտրւած: Նրանցից մէկը, աստիճանով կրօսելը, նշանակւում է անձնափոխանորդ:

121. Ձայների հաւասարութեան դէպքում առաւելութիւնը տրւում է աստիճանով աւագին, իսկ աստիճանների հաւասարութեան դէպքում մինն այն աստիճանն ունեցողներից աւագին:

Ծառայութեան գործով կամ հիւանդութեան պատճառով ընտրութիւններից բացակայող ընտրողները պարտաւոր են իրենց կարծիքը, մինչև ընտրութեան ժամանակը, կնքւած ծրարով ուղարկել բարձրակայ սպաններից մէկի անունով:

122. Պատւոյ դատարանի անդամների ընտրութիւնը կատարւում է տարին մի անգամ. ընտրութեան ժամանակի որոշումը վերապահւում է Սպարապետին: Դատարանի կազմի մէջ եղածները կարող են նորից ընտրուել: Ընտրութեան հետևանքի մասին, նմանապէս և ընտրւած անդամների իրենց պարտականութիւնների

կատարումը ստանձնելու ժամանակի մասին,  
յայտարարում է՝ ստորակայ սպաների դատա-  
րանի համար՝ առանձին գործամասին տրւած  
հրամանի մէջ, իսկ բարձրակայ սպաների դա-  
տարանի համար՝ բրիգադին տրւած հրամանի  
մէջ:

Դատարանի նոր կազմը իւր պարտականու-  
թիւնների կատարումը սկսում է միայն նա-  
խորդ կազմի լիազօրութիւնների մի տարւոյ  
ժամանակամիջոցը լրանալուց յետոյ: Եթէ դա-  
տարանի անդամները, նախ քան այն ժամանա-  
կամիջոցի լրանալը, որի համար նրանք ընտրը-  
ւած են, գործամասից դուրս են գալիս, այն ժա-  
մանակ, նրանց տեղ նոր անդամներ ընտրելու  
համար, նոր ընտրութիւն է նշանակւում տար-  
ւայ ընթացքում, երբ էլ լինի, այն պետի հրա-  
մանով, որի իշխանութեան տակ է գտնւում  
պատուոյ դատարանը:

123. Պատուոյ դատարանում գործը քննար-  
կելուց առաջ՝ պէտք է մեղադրեալի դատա-  
պարտելի արարքի մասին հետաքննութիւն կա-  
տարել:

124. Ստորակայ սպաների պատուոյ դատարանը հետաքննութիւն անել սկսում է կամ այն զօրամասի պետի պատուէրով, ուր հիմնւած է դատարանը, կամ ուղղակի ինքը, իրեն հասած տեղեկութիւնների հիման վրայ, այդ մասին անդամներից աւագի միջոցով հաղորդելով զօրամասի պետին: Հետաքննութիւնը կատարում է կամ դատարանը իր ամբողջ կազմով, կամ նրա մի քանի անդամները դատարանի հայեցողութեամբ:

125. Բարձրակայ սպաների պատուոյ դատարանում հետաքննութիւն կատարելու պարտականութիւնը դրւում է դատարանի անդամներից մէկի վրայ այն պետի տնօրինութեամբ, որի իշխանութեան տակ է գտնւում դատարանը. միաժամանակ և դատարանի իւրաքանչիւր անդամը պարտաւորւում է՝ այս պետին բերանացի կամ դրաւոր գեղւցում ներկայացնել իր բրիգադի պատուոյ դատարանի դատին ենթակայ ամեն մի բարձրակայ սպայի դատապարտելի արարքի մասին, որ իրեն յայտնի է դարձել:

126. Հետաքննութիւնը կատարւում է Զօրա-

կան դատական կանոնագրքի 324 և 326 յօդ-  
 լածներին մէջ (Զօրական Օրէնքների Հաւաք  
 1869 թւի XXIV) որոշւած կարգով: Տուցմունք-  
 ներին ստորագրում են ցուցմունք տւող ան-  
 ձերը, եթէ նրանք գրագէտ են:

127. Սյն պետը, որի իշխանութեան տակ է  
 գտնւում պատւոյ դատարանը, հետաքննութիւնը  
 քննարկելուց յետոյ, վճռում է թէ արդեօք  
 պէտք է թէ պետք չէ մեղադրեալին դատել.  
 նրան դատի մատնելու դէպքում, պետը գործը  
 յանձնում է պատւոյ դատարանի նախագահին  
 հետագայ տնօրինութեան համար:

128. Պատւոյ դատարանի դատին մատնելու  
 իրաւունքը պատկանում է, բացի նախորդ(127)  
 յօդւածի մէջ ցոյց տրւած անձերից, նաև վե-  
 րագասութեան կարգով ամեն մի բարձր պետին:  
 Բարձր պետը, սակայն, իրաւունք չունի փո-  
 խելու ցածր պետի տնօրինութիւնը պատւոյ  
 դատարանի դատին մատնելու մասին, նոյն իսկ  
 եթէ նա անբաւարար համարի այս դատարանի  
 դատին մատնելու առիթները:

129. Դատի մատնելու դէպքում, մեղադրեա-

լին տրւում է կատարած հետաքննութիւնը և իրաւունք է տրւում նախագահին խնդրելու, որ նոր վկաներ կանչի, փաստաթղթեր բերել տայ և տեղեկութիւններ հաւաքի: Նախագահը յարգելու դէպքում բաւարարութիւն է տալիս նման խնդրարկութիւններին, իսկ մերժման դէպքում — որոշում է կայացնում, ցոյց տալով մերժման հիմունքները: Նոր ցոյց տրւած վկաները կանչւում են յաջորդ 131 յօդւածի կանոններով: Այն դէպքում, երբ այսպիսի վկաները չեն կանչւում անձամբ ցուցմունք տալու, նրանցին գրաւոր ցուցմունքներ են առնւում:

130. Վկաները պատուոյ դատարան կանչւում են միայն այն ժամանակ, երբ նրանք ապրում են դատարանի տեղից ոչ աւելի քան հարիւր վերստ հեռու գեանուղիով և երեք հարիւր վերստ երկաթուղով և ջրային ճանապարհով: հակառակ դէպքում բերանացի ցուցմունքներէ տեղ գրաւոր ցուցմունքներ են առնւում նրանցից:

131. Պատուոյ դատարանը դատ անելու համար հաւաքւում է այն պետի նշանակած ժա-

մանակին, որի իշխանութեան տակ է գտնուում  
 պատույ դատարանը: Պատույ դատարանում  
 նախագահում է անդամներից աւագը:

132. Դատարանի անդամներից որ և է մէկի  
 հիւանդութեան, գործուղման, բացարկի կամ որ  
 և է պատճառով բացակայութեան դէպքում,  
 նրան փոխանակում է ստորակայ սպաների  
 դատարանում անձնափոխանորդներից աւագը,  
 իսկ բարձրակայ սպաների դատարանում այն  
 գորամասի անձնափոխանորդը, որին պատկա-  
 նում է բացակայող անդամը:

133. Պատույ դատարանի նիստերը տեղի են  
 ունենում զոնփակ: Գրաւոր դատաքննութիւնը  
 կատարւում է առանց զրազիրների մասնակ-  
 ցութեան: Թատիւ արդելում է հրապարակ հա-  
 նել դատարանում տեղի ունեցածը և հետաքրք-  
 նութիւնը. այդպիսի հրապարակումը համար-  
 ւում է սոյն Կանոնագրքի 107 յօդուածի մէջ  
 ցոյց տրւածներին հաւասար արարք և դատա-  
 րանի, զրա մէջ յանցաւոր՝ անդամները, ենթա-  
 կայ են պատույ դատարանի դատին մատուելու:

134. Պատույ դատարանը քննարկում է գործի վերաբերեալ բոլոր հաւաքած տեղեկութիւնները, դատարան է կանչում մեղադրեալին, լսում է նրա արդարացումները և ստուգում է նրա ներկայացրած փաստագրերը:

135. Եթէ մեղադրեալը պատույ դատարանի պահանջով դատարանին չի ներկայանում առանց յարգելի պատճառի, այն ժամանակ դատարանը, գործի քննարկութիւնը չկանգնեցնելով, միականի դատավճիռ է դնում:

Ծանօթութիւն. Մեղադրեալի՝ դատարանին չներկայանալու մասին կազմուած է մի առանձին որոշում, որ կցւում է գործին, և որի մէջ պէտք է բացատրւած լինի, թէ երբ է մեղադրեալը դատարան կանչուել, ինչ պատճառներով նա չի ներկայացել և ինչու այդ պատճառները յարգելի չեն համարուել:

136. Մեղադրեալը կարող է բացարկ յայտնել դատարանի անդամներից մէկի դէմ, նմանապէս և դատարանի անդամները իրենք իրենց կարող են բացարկել դատին մասնակցելուց: Դատարանը, բացատրութիւնները լսելուց յետոյ, նիստից հեռացնելով բացարկ յայտնողին՝ վրձ-

առևմ է, թէ արդեօք պէտք է բացարկը յար-  
գելի համարել, թէ չէ: Այն անդամը, որի դէմ  
բացարկ է յայտնուած, չի կարող ներկայ լինել  
այս վճռին:

Ծանօթութիւն: Դատարանի վճիռը բացարկի մա-  
սին՝ բացազրոււմ է մի առանձին որոշման մէջ,  
որ կցոււմ է դատավճռին:

137. Դատարանը, մեղադրեալի արդարա-  
ցուծները լսելուց և նրան նիստից հեռացնելուց  
յետոյ, սկսում է բերանացի կերպով քննել ա-  
րարքի յատկութիւնը և յանցանքի ապահանքը,  
որից յետոյ դատավճիռ է դնում: Եթէ այդ  
ժամանակ էական անհրաժեշտութիւն է լինում  
որ և է լրացուցիչ տեղեկութիւններ հաւաքելու  
կամ նոր վկաներ հարցափորձելու, այն ժամա-  
նակ դատարանը իրաւունք ունի, առանց դա-  
տավճիռ դնելու, նիստը յետաձգել: Դատարանը  
պէտք է այս առարկայի վերաբերեալ որոշման  
մէջ բացազրի յետաձգման հիմունքները, որոնց  
մասին նա պարտաւոր է նախազտի միջոցով  
անյապաղ տեղեկացրել այն պետին, որի իշխա-  
նութեան տակ է գտնուում պատուոյ դատարանը:  
երբ            դատարանը            լրացուցիչ            տե-

ղեկութիւնները ստանում է, այս պետք նիստի  
համար նորից ժամանակ է նշանակում ընդհա-  
նուր կանոնով:

138. Իւրաքանչիւր գործի քննութիւնն ու  
վճիռը պատույ դատարանում պէտք է մի նիս-  
տում վերջանայ, բացի այն դէպքերից, որոնք  
ցոյց են տրւած նախորդ (137) յօդւածի մէջ:

139. Պատույ դատարանի դատավճիռը, նոյն-  
պէս և այս դատարանի միւս բոլոր որոշումնե-  
րը, կայացւում են գաղանի քէարկութեամբ  
ձայների մեծամասնութեամբ:

140. Պատույ դատարանը կարող է դատա-  
վրձուել՝ 1), մեղադրեալին արդարացին, 2), նրան  
խրատ տալ, և 3), նրան ծառայութիւնից հեռա-  
ցրնել:

141. Պատույ դատարանի դատավճիռը, նա-  
խագահի և բոլոր անդամների ստորագրելուց  
յետոյ, անյապաղ յայտնւում է մեղադրեալին և  
միևնոյն օրը բոլոր առդիրներով, նախագահի  
ղեկոյցի հետ, ուղարկւում է այն պետին, որի  
կարգադրութեամբ, դատարանը նիստի է հրա-  
ւիրւել:

142. Պատույ դատարանի դատավճռի դէմ ըստ գործի էութեան զանգատ ասլ չի թոյլատրուում, բայց ծառայութիւնից հետացման դատապարտածը իրաւունք ունի երեք օրւայ ընթացքում, դատավճիռը իրեն յայտնելու ժամանակից սկսած, այս դատարանի համար որոշւած կանոնների խախտման դէմ բողոք ներկայացնել այն պետին, որի իշխանութեան տակ է գրանցուում պատույ դատարանը: Օրինակ՝ եթէ դատարանը հաւարել է առանց համապատասխան պետի թոյլատրութեան կամ ոչ պատշաճաւոր կազմով, կամ եթէ մեղադրեալը դատարան չի հրաւրել բացադրութիւններ տալու, կամ եթէ նրան մերժել են ստուգել այն ապացոյցները, որ նա ներկայացրել է իրեն արդարացնելու համար, և նմանները:

143. Եթէ այն պետը, որի իշխանութեան տակ է գտնուում պատույ դատարանը, այսպիսի բողոքը արդարացի է գտնուում, կամ թէ ինքը գործի դատաքննութեան մէջ նկատոււմ է դրա համար որոշւած կանոնների էական խախտումն, այն ժամանակ նա իրաւունք ունի դատավճիռը վերացնելու և նախադահին հրամայելու պատ-

ւոյ դատարանը նոր նիստի կանչել, պահելով  
 ասեմանուած կանոնները: Համապատասխան պե-  
 տին, գործը քննարկելու համար, ժամանակ է  
 տրուում ոչ աւելի քան երեք օր: Ժամանակա-  
 կէտը հաշոււմ է դատավճիռը նրան ներկայաց-  
 նելու օրից (141 յօդ.), իսկ եթէ բողոք է ներ-  
 կայացրած՝ բողոքը ներկայացնելու օրից:

144. Երբ դատավճիռ է կայացել մի սպայի  
 ծառայութիւնից հեռացնելու, այն ժամանակ  
 այն պետը, որի իշխանութեան տակ է գրա-  
 նուում պատւոյ դատարանը, եթէ ինքը չի վերա-  
 ցընում դատավճիռը (143 յօդ.), մեղադրեալին  
 առաջարկում է երեք օրւայ ընթացքում հրա-  
 ժարական խնդիր տալ: Յիշեալ առաջարկու-  
 թիւնը պէտք է անել նախորդ յօդւածի մէջ  
 (143) որոշուած ժամանակակէտերը վերջանա-  
 լուց ոչ ուշ:

145. Եթէ լանցաւորը երեք օրւայ ընթաց-  
 քում չի տալիս նախորդ յօդւածում (144) յիշ-  
 ւած խնդիրը, այն ժամանակ համապատասխան  
 պետը վերադասութեան կարգով անյապաղ  
 նրան ներկայացնում է ի հրաժարեցումն, դա-  
 տարանի դատավճռի համաձայն: Ս.յդ ներկա-

յացմանը կցուում է խկական դատավճիտը և բոլոր յատուկ որոշումները, եթէ այդպիսիները եղել են (յօդ. 129 և 135-137):

146. Ամեն անգամ երբ պատույ դատարանը ծառայութիւնից հեռացնելու վճիռ է դնում, դատարանի նախագահը պարտաւոր է խորհրդական գրութեամբ տեղեկագրել այն պետին, որի իշխանութեան տակ գտնուում է պատույ դատարանը, այն յանցանքի հանգամանքների մասին, որով մեղադրեալը յանցաւոր է ճանաչուել: Այս գրութիւնը ներկայացուում է բարձր իշխանութեանը այն դէպքում միայն, երբ այս յատկապէս պահանջուում է:

147. Պատույ դատարանի դատավճռով արձակածները միևնոյն հետեանքներին են ենթարկուում (յօդ. 60 և 61), ինչ որ իշխանութեան կարգադրութեամբ ծառայութիւնից արձակածները:

148. Պատույ դատարանի դատավճռով ծառայութիւնից արձակածներից չեն ընդունուում բողոքներ անկանոն վճռի դէմ. նոյնպէս և խղնդիրներ զրէական դատարանին մատնելու, որ իրենց անմեղութիւնը ապացուցելի:

149. Պատուոյ դատարանի դատին չենթակա  
բարձրակայ սպաները, երբ կատարուեմ են այս  
կանոնագրքի 107 յօդուածի մէջ յիշուած յան-  
ցանքները, ծառայութիւնից արձակուեմ են  
կառավարութեան որոշմամբ:

150. Այն զօրամասերի բարձրակայ ու ստա-  
րակայ սպաները, որոնց մէջ պատուոյ դատա-  
րաններ չեն հիմնուած (միաժամանակ եթէ բար-  
ձրակայ սպաների նկատմամբ հնարաւոր չի հա-  
մարուեմ սոյն կանոնագրքի 115 յօդուածի կա-  
նոնները գործադրել), երբ գործուեմ են այս  
կանոնագրքի 107 յօդուածի մէջ յիշուած արարք-  
ները, ծառայութիւնից արձակուեմ են իշխա-  
նութեան կարգադրութեամբ, պահելով կարգա-  
պահական եղանակով արձակման համար առա-  
ջադրուած կանոնները (յօդ. 57—59):

151. Այն պետը, որի իշխանութեան տակ է  
գտնուեմ պատուոյ դատարանը, սպային հաս-  
ցըրած կամ նրա օտայած, սպայական կոչումը  
վարկարեկող, ամեն մի վիրաւորանքի մասին  
հաղորդուեմ է այս դատարանին ի քննարկու-  
թիւն:

152. Սպայական միջավայրուեմ տեղի ունե-

քած վերաւորանքի կամ ընդհարման գործի  
 քննարկութեան ժամանակ, պատուոյ դատարանը  
 1), կարող է որոշել, որ գծաւողները հաշուեն,  
 եթէ հաշտութիւնը համապատասխան է նանաշ-  
 ւում սպայի արժանապատւութեան և գորամա-  
 սի աւանդութիւններին, և 2), եթէ գծաւթեան  
 հանգամանքների մէջ նկատոււմ է գծաւողնե-  
 րից որ և է մէկի անվայել արարքները (յօդ.  
 107 կ. 1), այն ժամանակ ըստ գծաւթեան  
 էութեան որոշում անելուց անկախ, այդ ան-  
 վայել արարքների մասին տեղեկագրելով այն  
 գորամասի պետին, ուր հիմնւած է դատարանը,  
 սկսում է հետաքննութիւն կատարել (յօդ. 124)  
 կամ կարգադրութեան է սպասում հետաքննու-  
 թիւն կատարելու մասին (յօդ. 125), որից յե-  
 տոյ գործը քննարկոււմ է սոյն Գանձագրքի  
 127 և յաջորդ յօդւածների կարգով:

153. Պատուոյ դատարանի սոյն Գանձագրքի  
 151 և 152 յօդւածների մէջ ցոյց տրւած պար-  
 տականութիւնները համապատասխան պետերի  
 վրայ են դրւում այն դէպքերում, երբ գորա-  
 մասի մէջ չկայ պատուոյ դատարան, կամ երբ  
 դէպքը վերաբերւում է այնպիսի անձերի, որոնք  
 ենթակայ չեն այս դատարանի դատին:

## ԲԱՌԱՅՈՒՅԱԿ

- Անկարգութիւնъ беспорядокъ  
 Անհնապանդութիւնъ неповиновение  
 Անձնափոխանորդъ запасный членъ  
 Անմեղութիւնъ невинность  
 Անմիջական պետъ непосредственный началь-  
 никъ  
 Անւանակոչъ перекличка  
 Այրբեմական մատեանъ алфавитный журналъ  
 Առանձին մասъ отдѣльная часть  
 Առաջագրութիւնъ предписание  
 Առաջարկութիւնъ предложение  
 Առդիրъ приложение  
 Առկայъ на лицо  
 Առկայելъ приостановить  
 Աստիճանъ чинъ  
 Աստիճանայարգութիւնъ чинопочитание  
 Աստիճան րարձրացելъ производство въ чинъ  
 Արարքъ дѣяніе  
 Արձակելъ уволить  
 Արձակման գիրъ увольнительный билетъ  
 Արձակուրդъ отпускъ  
 Աւագъ старшій

Բաժնեակ (հրետապորի, հեծելապորի дивизионъ  
(артиллерійскій, кавалерійскій)

Բանբեր вѣстовой

Բարձրակայ սպայ штабъ-офицеръ

Բաշարկ отводъ

Բողոք протестъ

Բրիգադъ бригада

Գանախտ жалоба

Գանախտի գրքъ книга жалобъ

Գանախտների հարցումъ опросъ жалобъ, пре-  
тензій

Գանձապահարի արկղъ казначейскій ящикъ

Գետնուղի грунтовая дорога

Գերակետիկъ сверхсрочный

Գժտութիւն սсора

Գործօն ծառայութիւնъ дѣйствительная служба

Գործուղումъ командировка

Գումարապետъ командиръ баталіона

Գունդъ полкъ

Դատապարտեալ осужденный

Դատապարտելի արարքъ предосудительный  
поступокъ

Դատախօսիքъ приговоръ

- Դատարանական թիւն производство (судебное)  
 Դանգիակ նիւտ засѣданіе при закрытыхъ  
 дверяхъ, закрытое засѣданіе  
 Դատ разрядъ  
 Դատարանъ судъ  
 Դատի մատնել предать суду  
 Դրամական տոյժ денежное взысканіе  
 Դրական положеніе  
 Դրոշ знамя  
 Ենթամայ унтеръ-офицеръ  
 Երթ походъ  
 Զանցանք проступокъ  
 Զանցանական թիւն упущеніе  
 Զեկոյу рапортъ  
 Զեկուցել доложить, доносить  
 Զեանդարանъ помѣщеніе  
 Զինւոր солдатъ  
 Զինւորականъ военскій, военный чинъ  
 Զինւորական կարգապահական թիւն военская  
 дисциплина  
 Զորական-դատականъ военно-судебный  
 Զորական-քրէականъ օրէնք военно-уголовный  
 законъ

- Զօրակահն-տնոյղապահակահն военно-санитарный  
 Զօրակահն ծառայող военнослужащій  
 Զօրակահն տիրճահնաւոր военный чиновникъ  
 Զօրակահն դատարանն военный судъ  
 Զօրակահն իշխանաւթիւնն военное вѣдомство  
 Զօրակահն սրահըւմ войсковое соединеніе  
 Զօրահաши войсковая часть, часть войскъ  
 Զօրահոսу казарма  
 Զօրահար генераль  
 Զօրահեսն смотръ  
 Ընթացք ծառայողթիւնն прохождение службы  
 Թափուր պաշտօնն вакантная должность, ва-  
 канція.  
 Թիւանի ефрейторъ  
 Թեկնածու кандидатъ, избираемый  
 Թարաշտուլթիւնն разрѣшеніе  
 Թոշակ (գօրքի) довольствіе (войскъ)  
 Ժամանակակէտ срокъ  
 Ժամանակահատուկ часовой  
 Ժամանակածուլթիւնն богослуженіе  
 Իշխանաւթիւնն власть, начальство, вѣдѣніе  
 Լուծումն рѣшеніе  
 Լրատար посыльный

- Խորհրդակցական конфиденціальный  
 Խուճր команда  
 Ծառայութեան ցուցակъ послужной списокъ  
 Ծառայութիւն служба  
 Կալանք арестъ  
 Կայազօր гарнизонъ  
 Կանոն правило  
 Կանգնեցնել հրացանն սուրն ставить подъ ружье  
 Կանոնադիրք уставъ  
 Կանոնադրութիւն положеніе  
 Կանոնակորութիւն правильность  
 Կարգъ порядокъ, разрядъ  
 Կարգապահութիւն дисциплина  
 Կէտիկ срокъ  
 Կրանք паркъ (артиллерійскій)  
 Կրտսեւր младшій  
 Կոչում званіе  
 Կոպար окладъ  
 Հակօրէն противозаконный  
 Համբարակъ интендантъ  
 Համբարակայիւն интендантскій  
 Համնարդ адъютантъ  
 Հարցափորձ допросъ

- Հարցում опросъ  
 Հաւատարմութիւն удостоверитъ  
 Հեծելազոր эскадронъ  
 Հետաքննութիւն дознаніе  
 Հերթ очередь  
 Հետևանք послѣдствіе  
 Հրատար отставка  
 Հրատարական խնդիր просьба объ увольненіи  
 (въ отставку)  
 Հրամանատար командиръ  
 Հրամանատարութեան կարգով, ըստ հրաման-  
 ատարութեան по командѣ  
 Հրամանատարութիւն командованіе  
 Հրապարակային տեղ публичное мѣсто  
 Հրապարակում оглашеніе  
 Հրետափոր артиллерія  
 Չերտակալած арестованный  
 Ճամբարակային հաւաք лагерный сборъ  
 Մասնակից соучастникъ  
 Մարտկոց батарея  
 Մերձակորդն ближайшій начальникъ  
 Միականի դատաւճիռ заочный приговоръ  
 Յանդիմանութիւն выговоръ

Յայտ *заявление*

Յիշեցում *напоминание*

Նախնախան հալանք *предварительный арестъ*

Նիտ *засѣданіе*

Նկատողութիւն *замѣчаніе*

Շարային *строевой*

Շարային մաս *строевая часть*

Շրանշան *орденъ, орденскій знакъ*

Սրոշում *опредѣленіе, постановленіе*

Ուղղակի պետ *прямой начальникъ*

Պախարակելի *предосудительный*

Պահակ *карауль*

Պահակէտ *постъ*

Պահանոց *гауптвахта*

Պահեստ *запасъ*

Պաշտօն *должность*

Պատժւածները դաս *разрядъ штрафованныхъ*

Պատիժ *наказаніе, взысканіе*

Պատիժները մատեան *журналъ взысканій*

Պատվաւոր պահակ *почетный карауль*

Պատէր *приказаніе*

Պատւոյ դատարան *судъ чести*

Պարէտական վարչութիւն *комендантское у-*  
*равленіе*

- Պարէտ комендантъ  
 Պետ начальникъ  
 Չոկապետ отдѣленный командиръ  
 Չոկատ отрядъ  
 Չրայիւ ճանապարհ водная дорога  
 Ռազմական նախարար военный министръ  
 Ռազմելթ боевой походъ  
 Սիւնեակ графа  
 Սխրագործութիւն подвигъ  
 Սոսկական (գինւոր) рядовой  
 Սպայ офицеръ  
 Սպաների ժողովъ собраніе офицеровъ  
 Սպարապետ командующій войсками  
 Ստորադասութիւն подчиненность  
 Ստորադասութեան կարգովъ въ порядкѣ под-  
 чиненности  
 Ստորադրեալ подчиненный  
 Ստորակայ սպայ оберъ офицеръ  
 Վաշտապետ командиръ роты  
 Վարչութիւն управление  
 Վաւերացնել засвидѣтельствовать  
 Վերադասութեան կարգով, ըստ վերադասու-  
 թեան по командѣ  
 Վերակայ фельдфебель

ՆԿԱՏԻԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ.

Էջ.	Տող.	Տպւած է.	Պէտք է լինի.
	Վեր- բերց.	Ներ- բերց.	
6	8	—	յանցագործները
26	3	—	յիշեցմանը
38	—	1-2	նոյնպէս չի և
43	—	6	հաւասարել
43	—	1	հաւասարումը
48	9	—	գանգատին





Երջւ են սևեել պաշտօնական հրատարակող  
 Թնամբ եռ վաճառողմ են Գշխատոր շտարողմ

1. Հետևազորի շարքի Կանոնագիրք:
2. Հեռնային հրետազորի շարքի Կանոնագիրք.  
 հրանօթի վարժութիւն:
3. Թիթև հրետազորի շարքի Կանոնագիրք. հրա-  
 նօթի վարժութիւն:
4. Հրահանգ հետևազորի խրամառներ շինելու:
5. Հրացանի և փամփառչոյի համառօտ նկարա-  
 գրութիւն:
6. Կարգապահութեան Կանոնագիրք:
7. Հետևազորի կօմանդներ (սպառաւծ):

Մամուլի տակ են եռ շտառով յոյս կտեսնեն

1. Թիթև հրետազորի մարտկոցի վարժութիւն:
2. Գնդացիք խմբի Կանոնագիրք:
3. Կապի ծառայութիւն: